«ՆՈՐԱՎԱՆՔ»
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

*Արմեն Ղալեչյան*

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Երևան
2016

ՀՏԴ 004 : 355
ԳՄԴ 32.81 + 68
Ղ 230

*Գիրքը հրատարակվում է*
*«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի*
*որոշման հիման վրա*

**Ղալեչյան Արմեն**

**Ղ 230** ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ/Ա.Ղալեչյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2016. - 80 էջ:

Գիրքը մտածված է որպես մեթոդական ուղեցույց, որտեղ համառոտ՝ վերլուծական հոդվածների տեսքով, ներկայացված են ռազմական ոլորտում տեղեկատվական պայքարի դրսևորումները և հիմնական խնդիրները: Հատուկ ուշադրություն է դարձվել առաջատար պետությունների զինված ուժերի կողմից տեղեկատվական պատերազմներ վարելու մեթոդների ուսումնասիրությանը՝ կարևորելով այս խնդրում մարդկային կապիտալի գործոնը, բարձրակարգ մասնագետներ ունենալու և պատրաստելու կարևորագույն հանգամանքը:

Գիրքը հասցեագրված է ինչպես ռազմական ուսումնական հաստատությունների սաներին, այնպես էլ սպայական կազմի այն հատվածին, որն անմիջականորեն առնչվում է տեղեկատվական գործողությունների կազմակերպման կամ հակառակորդի նման բնույթի քայլերին հակազդելու խնդիրների հետ: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ «միասնական ազգ-բանակ» գաղափարախոսական հայեցակարգի համատեքստում տեղեկատվական պայքարի և հակապայքարի միջոցների ու ձևերի իմացությունը հրատապ է նաև հայկական հանրության բոլոր անդամների համար:

**ՀՏԴ 004 : 355**
**ԳՄԴ 32.81 + 68**

**ISBN 978-9939-825-32-8**

© «Նորավանք» ԳԿՀ, 2016

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ..... 5

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ..... 7

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՊԱՅՔԱՐԻ
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 23

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԴԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ..... 36

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
«ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 49

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 59

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 75

# ՆԱԽԱԲԱՆ

Տեղեկատվական ոլորտում իրագործվող հարձակողական և պաշտպանական օպերացիաներն արդեն վաղուց դարձել են առաջատար պետությունների և, առաջին հերթին, ԱՄՆ-ի վարած ռազմաքաղաքական պայքարի կարևոր միջոցներից մեկը: Այս ոլորտում զգայի թվով գիտակիրառական մշակումներ են կատարվում նաև ՀՀ-ում: Սակայն տվյալ առումով հայ իրականության մեջ, մեր կարծիքով, կա մի կարևոր խնդիր՝ պայմանավորված երկու հանգամանքով: Առաջինն այն է, որ մեր մասնագետները միանգամայն օբյեկտիվ պատճառներով համեմատաբար ուշ ներգրավվեցին այս ոլորտում կատարվող հետազոտական աշխատանքներում, ուստի հետ չմնալու համար աշխատեցին հնարավորինս արագ հաղթահարել սկզբնական փուլերը: Որպես հետևանք՝ մեր ռազմագիտական գրականության մեջ գրեթե չկան աշխատություններ՝ նվիրված ոլորտի հիմնարար հասկացությունների պարզաբանմանը: Երկրորդ հանգամանքն այն է, որ ընդհանրապես բացակայում են այդ հասկացությունների համընդհանուր ճանաչում ստացած սահմանումները:

Այս խնդրի պատճառով ՀՀ Զինված ուժերի սպայակազմը չունի տվյալ ոլորտի հիմնական հասկացությունների մեծ մասի վերաբերյալ հստակ պատկերացում, ինչը դժվարացնում է նրա հետ գործնական աշխատանքը, մինչդեռ տեղեկատվական անվտանգության հիմնական օբյեկտը մարդն է: Դրան գումար-

վում են նաև հայերենի համապատասխան տերմինաբանության անբավարար մշակվածությունը, երբեմն թույլ տրված հապճեպությունն ու անշրջահայացությունը: Ուստի, հեղինակը հույս ունի, որ սույն ձեռնարկի հրապարակումն օգտակար կլինի մեր Զինված ուժերի սպայակազմի համար:

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ[1]

Հասարակության զարգացման ներկայիս փուլը բնութագրվում է տեղեկութային բնագավառի դերի աճմամբ: Տեղեկութային բնագավառը տեղեկույթ հավաքող, մշակող, փոխանցող և օգտագործող սուբյեկտների, տեղեկույթի պահպանման, մշակման ու հաղորդման կազմակերպատեխնիկական միջոցների, ինչպես նաև այդ գործընթացներում առաջացող հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այս բնագավառը, կատարելով հասարակական կյանքի համակարգման և կարգավորման կարևոր գործառույթ, ակտիվ ազդեցություն է գործում ազգային անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Ասվածից պարզ է, որ պետության կարևոր խնդիրներից է տեղեկութային անվտանգության ապահովումը: Տեղեկութային անվտանգության կարևոր մասն է տեղեկատվական անվտանգությունը[2], այս-

[1] Հայկական բանակ, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ ռազմագիտական հանդես, 3-4, (81-82), 2014թ.:

[2] Լատիներեն informatio (անգլերեն՝ information, ռուսերեն՝ информация) տերմինը ժամանակին հայերեն թարգմանվել էր «տեղեկատվություն» բառով: Եթե նայենք 1950-1960-ական թթ. բառարանները, ապա «ինֆորմացիա» բառի դիմաց տրվում է երկու իմաստ. 1. Տեղեկությունների հաղորդում, տեղեկացում, իրազեկում, 2. տեղեկություններ, տվյալներ: Սակայն հետագայում սկսեց գերակայել «ինֆորմացիա» տերմինը երկրորդ իմաստով: Օրինակ՝ գենը կրում է օրգանիզմի զարգացման մասին «ինֆորմացիա», կամ՝ շտեմարաններում պահվում է զանազան բնույթի «ինֆորմացիա» («տեղեկատվություն» տերմինը նման դեպքերում կիրառելի չէ):

ինքն՝ տեղեկատվական ոլորտում[1] ազգային շահերի պաշտպանվածության վիճակը[2]: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ «տեղեկատվական անվտանգությունը» կապված է սուբյեկտի և տեղեկույթի փոխազդեցության, սուբյեկտի մեջ տեղեկույթի թափանցման հետ և մի վիճակ է, որում գլխավորը ոչ թե բուն տեղեկույթի, այլ այդ տեղեկույթը կրող սուբյեկտի անվտանգությունն է: Այսինքն՝ «տեղեկատվական անվտանգությունը» սուբյեկտի (հասարակության) այն վիճակն է, որում տեղեկույթի և սուբյեկտի փոխազդեցության հետևանքով սուբյեկտի մեջ առաջացած փոփոխությունը սպառնալիք չի հարուցում նրա ֆիզիկական ու հոգեկան առողջության, ինչպես նաև հասարակության ու պետության համար: Նույն տերմինով հաճախ անվանում են նաև այն գործընթացը, որը միտված է այդ վիճակի հաստատմանը, մասնավորապես՝ պետության հակազդեցությունը ազգային մշակույթի, ավանդական հոգևոր արժեքների

Անգամ կա էական տարբերություն «տեղեկութային» և «տեղեկատվական» անվտանգությունների միջև: Մեր հանդեսն իր հիմնադրման օրից տարբերակում է «տեղեկույթ» և «տեղեկատվություն» հասկացությունները, սակայն հայերենում, ցավոք, գրանցում է ստացել սխալ՝ «տեղեկատվություն» տերմինը, որն արտահայտում է և՛ «տեղեկույթ», և՛ բուն «տեղեկատվություն» հասկացությունները: Սույն հոդվածում դրանք զանազանված են, ընդսմին՝ «տեղեկույթն» ունի ավելի լայն իմաստ՝ ներառելով նաև «տեղեկատվությամբ» տարածվող տեղեկությունները (տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Ե., 2006, էջ 273 (http://issuu.com/5420/docs/texekatu?e=3902245/2725897), իսկ «տեղեկատվություն» տերմինը վերաբերում է միայն այն տեղեկույթի հաղորդմանը, որն ի սկզբանե նախատեսված էր հրապարակման համար - *Խմբ.*:

[1] Տեղեկատվական ոլորտը ներառում է տեղեկութային բնագավառի այն հատվածը, որը վերաբերում է հասարակության, մարդկային խմբերի, առանձին անհատների մտածելակերպի, կողմնորոշումների, արժեքային համակարգի, աշխարհայացքի, հուզականի վրա ազդեցություն գործելու նպատակով հրապարակման կամ տարածման համար նախատեսված տեղեկույթին - *Խմբ.*:

[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ», ՀՀ Նախագահի 2009թ. հունիսի 26-ի հմ. ՆԿ-97-Ն կարգադրության հավելված (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559):

նենգափոխման և հասարակության մեջ քայքայիչ գաղափարների ներդրման սպառնալիքներին[1]: Նկատենք, որ տեղեկույթի նկատմամբ կա երկակի (դուալիստական) մոտեցում, ըստ որի՝ ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվական ոլորտն ունի երկու բաղադրիչ՝ տեղեկութատեխնիկական (մարդու ստեղծած տեխնիկայի արհեստական աշխարհը) և տեղեկութահոգեբանական (կենդանի բնությունը):

Ինչ վերաբերում է տեղեկատվական անվտանգության ներկայացված սահմանմանը, ապա այն համահունչ է տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերն արտահայտող նպատակներին (հետևաբար՝ ազգային անվտանգության խնդիրներին), այն է՝ «տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը»[2]: Պաշտպանության բնագավառում ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրները ներառում են նաև՝

- «հավանական հակառակորդի տեղեկատվաքարոզչական և հոգեբանական գործողություններին ակտիվ հակազդեցությունը, դրա ձևերի ու միջոցների մշտական կատարելագործումը,
- պաշտպանության բնագավառում տեղեկատվական անվտանգության գծով մասնագետների պատրաստումը»[3]:

Տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական միջոցը տեղեկատվական պայքարն է: Այն հիմնված է տե-

[1] Տե՛ս А.А. Данилевич, Д.В. Лоскутов, О.К. Рогозин, «Информационная безопасность». «Война и мир». Справочник (http://www.voina-i-mir.ru/chapter/1):
[2] «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», հավելված «Հիմնական տերմիններ և հասկացություններ», «ՀԲ», 2006, հմ. 2:
[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ:

ղեկույթի հիմնարար՝ մարդու հոգեկանի վրա ազդելու հատկության վրա. տեղեկույթը, կտրվելով արտացոլման օբյեկտից[1], ստանում է ինքնուրույն գոյություն, դառնում հիշողության բովանդակություն, այսինքն՝ որպես առանձին գործոն մասնակցում է հոգեկան պրոցեսներին՝ կերպափոխվելով պատկերացումների, գիտելիքի, հմտությունների և ունակությունների:

Մարդու նկատմամբ տեղեկութահոգեբանական ազդեցության միջոցների կիրառումը կարող է հանգեցնել՝ ա) մարդու հոգեկանի կամ հոգեբանական առողջության փոփոխության, բ) անձնավորության արժեքների, կենսական դիրքորոշումների, կողմնորոշիչների, աշխարհայացքի փոփոխության[2]: Մարդու վրա տեղեկութահոգեբանական ազդեցությունը կարող է լինել ինչպես կառուցողական, այնպես էլ քայքայիչ բնույթի:

Տեղեկութային հասարակության մեջ առանձնահատուկ կարևորություն է ստանում տեղեկատվական տարածությունը, որն ընդհանուր երևակայական (վիրտուալ) տեղեկութային տարածության այն մասն է, որը նախատեսված է տեղեկատվական փոխազդեցությունների համար: Այսպիսով՝ տեղեկատվական տարածությունը բաղկացած է տեղեկատվական փոխազդեցության մեջ գտնվող օբյեկտներից և այդ փոխազդեցության տեխնոլոգիաներից[3]:

[1] Տե՛ս «Информация». «Философский энциклопедический словарь», М., 1989, с. 222.
[2] Տե՛ս С.А. Зелинский, Информационно-психологическое воздействие на массовое сознание, СПб., 2008 (http://www.mediagram.ru/netcat_files/108/110/h_1eaef80e566efbfa041bafd712f9 b13c); Т.И. Ежевская, Психологическое воздействие информационной среды на современного человека. «Психопедагогика в правоохранительных органах», 2009, № 2 (http://cyberleninka.ru/article/n/psihologicheskoe-vozdeystvie-informatsionnoy-sredy-na-sovremennogo-cheloveka):
[3] Տե՛ս В.С. Игнатов, Д.В. Пименова, Информационное пространство: структура и функции. «Известия высших учебных заведений. Поволжский регион», 2007, № 3 (http://cyberleninka.ru/article/n/informatsionnoe-prostranstvo-struktura-i-funktsii):

Տեղեկատվական տարածության տեխնոլոգիական և կազմակերպական բաղադրիչներն են տեղեկատվահեռահաղորդակցային ենթակառուցվածքը (երկրի տարածքում բաշխված համակարգիչները, որոնք որպես ցանց միմյանց հետ կապված են կապի և հեռահաղորդակցության միջոցներով) և մեքենայական կրիչների վրա գտնվող տեղեկատվական ռեսուրսները (տվյալների ավտոմատացված շտեմարանները, Համացանցի վեբ-կայքերում բաշխված տեղեկութային ռեսուրսները և այլն): Տեղեկատվական տարածության մյուս բաղադրիչը՝ տեղեկատվական փոխազդեցության մեջ գտնվող օբյեկտները, ներառում է տեղեկույթի և տեղեկատվության աղբյուրները (քաղաքական գործիչներ, մշակութային ընտրախավի ներկայացուցիչներ, փորձագետներ, հատուկ տեսակի տեղեկույթի (կինո, թատրոն, գովազդ) արտադրողներ, ԶԼՄ և այլն):

Տեղեկատվական տարածությունն ունի հետևյալ հիմնական հատկությունները.

- մշտապես փոփոխվում է, ուստի մշտական տեղեկատվական գերիշխանության հասնելը շատ դժվար է,
- ունի անհամասեռ կառուցվածք. կան սպառողի ուշադրությունը գրավող և վանող ոլորտներ,
- ունի օտար միջամտությունից պաշտպանված և չպաշտպանված հատվածներ,
- համապիտանի է. չկա մարդկային գործունեության որևէ բնագավառ, որի կենսագործունեությունը չառնչվի տեղեկատվական տարածության հետ,
- ուղղակիորեն կապված չէ իրական տարածության հետ,
- ունի ազգային առանձնահատկություններ:

Տեղեկատվական պատերազմը կարելի է սահմանել որպես օտար տեղեկատվական տարածությունում կատարվող չարտոնված գործունեություն[1]: Տեղեկատվական պատերազմը բնութագրվում է տեղեկութային զենքի կիրառմամբ:

Կան «տեղեկութային զենք» հասկացության բազմաթիվ սահմանումներ: Դրանց մեծ մասում թվարկվում են կա՛մ տեղեկութային զենքի տեսակները, կա՛մ էլ այդ զենքի ազդեցության օբյեկտները[2]: Նման մոտեցումը թերի է, որովհետև տվյալ դեպքում հնարավոր չէ սահմանման մեջ ներառել տեղեկութային զենքի բոլոր (այդ թվում՝ ստեղծվելիք) տեսակները կամ դրա ազդեցության բոլոր օբյեկտները:

Տեղեկութային զենքի առավել ընդհանուր սահմանումը հետևյալն է. ալգորիթմ, որը հնարավորություն է տալիս մի տեղեկութային համակարգը կառավարել մյուսի շահերին համապատասխան՝ օգտագործելով կառավարվող համակարգ մուտք գործող կամ դրանում մշակվող տեղեկույթը, այդ համակարգում կիրառվող տեղեկութային տեխնոլոգիաները կամ միջոցները: Այսպիսով՝ տեղեկութային զենք են այն հատուկ միջոցները, տեխնոլոգիաները և տեղեկույթը, որոնք հնարավորություն են տալիս օտար տեղեկատվական տարածության վրա ազդելու միջոցով զգալի վնաս հասցնել ընդդիմադիր կողմի կարևոր

[1] Տե՛ս նաև *А.В. Атанесян,* Коммуникативные аспекты политических конфликтов. Е., 2005, сс. 50-75.

[2] Տե՛ս, օրինակ, *Н.П. Шеховцев, Ю.Е. Кулешов*, Информационное оружие: теория и практика применения в информационном противоборстве (http://pentagonus.ru/publ/materialy_posvjashheny/2000_nastojashhij_moment/informacionnoe_oruzhie_teorija_i_praktika_primenenija_v_informacionnom_protivoborstve/122-1-0-2215);
*Р.Шафрански,* Теория информационного оружия (http://psyfactor.org/infowar3.htm):

կենսական շահերին: Տեղեկատվական պայքարի ոլորտում տեղեկութային զենքը կերպափոխում է թիրախային օբյեկտի[1] հետ առնչվող տեղեկատվական տարածության համապատասխան հատվածը և այդ միջոցով ուղղորդում օբյեկտի վարքագիծը: Դրա համար տեղեկութային զենքն օտար տեղեկատվական տարածություն է ներմուծում հետևյալ տեսակների տեղեկույթ. ազդեցության օբյեկտին անհայտ, աղավաղված կամ էլ տեղեկույթի մշակման նոր կանոններ (կասկած սերմանելով նախկին կանոնների ճշմարիտության նկատմամբ):

Տեղեկութային զենքը չի ոչնչացնում տեղեկատվական տարածությունը, այլ օգտագործում է այն, հարմարեցնում իրեն՝ ստեղծելով նոր հատվածներ: Տեղեկութային զենքի ազդեցությամբ թիրախային համակարգի գործունեությունը կերպափոխվում է կամ դադարում: Տեղեկութային զենքով խոցվածության աստիճանը չափվում է խոցված տեղեկութային համակարգի այն մասի տեղեկութային ծավալով, որը կա՛մ ոչնչացվել է, կա՛մ էլ ծառայում է օտար համակարգի նպատակներին:

Տեղեկութային զենքի առանձնահատկություններն են.

- կառավարելիությունը, որի շնորհիվ ապահովվում է թիրախի վրա տեղեկութային ազդեցությունը տվյալ ժամանակում և տվյալ մասշտաբով,

[1] Ամերիկյան մասնագետները տեղեկատվական ոլորտի տեղեկութային զենքի ազդեցության առավել կարևոր օբյեկտներ են համարում օտար պետության ժողովրդի և նրա ռազմաքաղաքական ղեկավարության կամքը, ԶՈՒ-ի անձնակազմը, ազգային մշակույթը (տե՛ս *А.В. Манойло,* Государственная информационная политика в особых условиях: Монография. М., 2003 (http://www.evartist.narod.ru/text24/0022.htm):

- ծածուկությունը, որն էապես դժվարացնում է հակառակորդի կողմից տեղեկութային ազդեցության և ազդեցության աղբյուրի հայտնաբերումը,
- համապիտանիությունը, այսինքն՝ թիրախը հնարավորինս շատ կողմերից կամ շատ թիրախներ խոցելու հնարավորությունը,
- կիրառման արդյունավետության համեմատությամբ փոքր ինքնարժեքը,
- դյուրամատչելիությունը, որի շնորհիվ խիստ դժվար է վերահսկել նրա տարածումը և ազդեցության մասշտաբը:

Տեղեկութային հասարակությանը բնորոշ է տեղեկատվական-հոգեբանական հակամարտությունը, որը տեղեկատվական-հոգեբանական հարաբերությունների երկու կամ ավելի մեծ թվով սուբյեկտների շահերի բախում է, երբ սրվում կամ լուծվում են տեղեկութային տարածությունում իշխանության կամ քաղաքական ղեկավարման հետ կապված հակասությունները[1]:

Տեղեկատվական-հոգեբանական հակամարտության հիմնական փուլերն են.

ա) *տեղեկատվական ընդդիմամարտությունը,* որի ժամանակ սոցիալական սուբյեկտների միջև ծագող հակասությունները լուծվում են աշխատանքային կարգով, կրում են տեղային բնույթ, չեն կարող վնաս հասցնել ազգային շահերին և նույնիսկ կատարում են կարգավորող դեր՝ հնարավորություն ընձեռելով հասարակության խմբերի (միջազգային ասպարեզում՝ պետու-

[1] Դրանք տեղեկութային հասարակության մեջ եղած բոլոր տեսակի (սոցիալական, քաղաքական, կրոնական, ազգային և այլ) հակասությունների արտացոլումն են:

թյունների) միջև հակասությունները հայտնաբերելու դեռ սաղմնային փուլում,

բ) *շահերի բախման փուլ,* երբ հակասությունները կարող են սրվել՝ հակամարտության մեջ ներքաշելով նոր սուբյեկտների, հնարավոր են սադրանքներ:

Այս փուլում հակամարտության կողմերի հարաբերությունները համապատասխանում են խաղաղ գոյակցության օրենքներին, սակայն հակամարտությունը լուծել հնարավոր է միայն կողմերի համատեղ փոխհամաձայնեցված ջանքերով,

գ) *տեղեկատվական-հոգեբանական ագրեսիա,* երբ կողմերից մեկի օգտին հակամարտության լուծումը կարող է վնաս հասցնել պետական շահերին: Կողմերը կամ առնվազն նրանցից մեկը նախապատվություն են տալիս հակառակորդի նկատմամբ «ուժ», այսինքն՝ տեղեկութահոգեբանական ազդեցություն կիրառելուն, կողմերը բաժանվում են ագրեսորի և զոհի,

դ) *տեղեկատվական-հոգեբանական պատերազմ,* որի ժամանակ հակամարտությունն ստանում է համընդգրկուն մասշտաբ, կողմերից առնվազն մեկը կիրառում է տեղեկութային զենք:

Հարկ է նշել, որ այս բաժանումը ինչ-որ չափով պայմանական է[1], որովհետև փուլերի տարանջատման չափանիշները միանշանակ չեն: Դրանք է՛լ ավելի անորոշ են դառնում հետևյալ գործոնների ազդեցությամբ[2].

[1] Այդ փուլերը կարող ենք նաև անվանել «տեղեկատվական պայքար» ընդհանուր տերմինով՝ յուրաքանչյուր փուլը բնորոշելով պայքարի ինտենսիվության աստիճանով: Ըստ այդմ՝ պայքարի ինտենսիվության ամենաստորին աստիճանը կհամապատասխանի տեղեկատվական ընդդիմամարտությանը, իսկ ամենաբարձրը՝ տեղեկատվական պատերազմին (С.Гриняев, Взгляды военных экспертов США на ведение информационного противоборства. «Зарубежное военное обозрение», 2001, № 8):

[2] Տե՛ս *Л.В. Воронцова, Д.Б. Фролов,* История и современность информационного противоборства, М., 2006 (http://www.twirpx.com/file/199402/):

- տեղեկութային հասարակություններով պետությունների թվի աճում,
- համաշխարհային տեղեկութային ենթակառուցվածքների արագ տեմպերով ստեղծում, դրանց վերածում միջազգային հանրության կենսագործունեության հենքային տարրի,
- նշանակալի ձեռքբերումներ մարդու գիտակցության, կամքի և զգացմունքների վրա ազդելու ունակ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում,
- համակարգչային և հեռահաղորդակցային համակարգերին վնաս հասցնելու ծրագրային-տեխնիկական միջոցների ակտիվ զարգացում,
- մի շարք պետությունների տեղեկութային տարածությունների պաշտպանության միջոցների ու մեթոդների զարգացման անբավարար մակարդակ,
- պետությունների մեծ մասի տեղեկատվական քաղաքականությունների անկատարություն:

Տեղեկատվական պայքարի օբյեկտ կարող է լինել տեղեկատվական տարածության ցանկացած տարր կամ հատված, այդ թվում՝ տեղեկութային հասարակության մեջ սոցիալական, քաղաքական ու հոգեբանական հարաբերությունների համակարգերը: Տեղեկատվական պայքարի սուբյեկտներն են՝

- պետությունները, նրանց դաշինքներն ու միությունները, միջազգային կազմակերպությունները,
- ոչ պետական անօրինական (այդ թվում՝ անօրինական միջազգային) զինված կազմավորումներն ու ահաբեկչական, ծայրահեղական, ապակառուցողական կրոնական կազմակերպությունները,

- անդրազգային ընկերությունները,
- մեդիա-կորպորացիաները (ԶԼՄ) և այլն:

Տեղեկատվական պայքարի նպատակներին հասնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները.

ա) *տեղեկատվահոգեբանական իշխում,* որը իրավիճակի վերաբերյալ տեղեկութային անընդհատ հոսքը հավաքելու, մշակելու և բաշխելու ունակությունն է՝ միևնույն ժամանակ խանգարելով հակառակորդին անելու նույնը: Տեղեկատվական իշխումը կարող է սահմանվել նաև որպես օպերացիայի իրականացման այնպիսի տեմպի ապահովման ունակություն, որը գերազանցում է հակառակորդի տեմպը: Տեղեկատվական իշխման կարելի է հասնել յուրային տեղեկատվական աղբյուրների հզորության մեծացմամբ:

բ) *տեղեկութային զենքի անհամաչափության օգտագործում.* դրա շնորհիվ հնարավոր է պայքարել նույնիսկ ավելի հզոր սուբյեկտի դեմ: Տեղեկատվական անհամաչափությունը տեղեկութահոգեբանական ազդեցության և տեղեկութային զենքի առավել կարևոր բնութագրերից է: Դրա շնորհիվ են, օրինակ, ահաբեկչական խմբավորումները կարողանում քարոզչական պատերազմ մղել իրենցից անհամեմատ ավելի հզոր կազմակերպությունների՝ պետությունների դեմ:

Տեղեկատվական անհամաչափության պատճառը ցանկացած տեղեկութային տարածության բազմարժեքությունն է և դրանում խոցելի կողմերի մշտական առկայությունը: Տեղեկատվական պայքարի գլխավոր առանձնահատկություններն են՝

- նախապատրաստական փուլի գաղտնիությունը (այդ թվում՝ տեղեկատվական ուժերն ու միջոցները հակառա-

կորդի հետախուզության համար աննկատ կերպով տարաշարժելու հնարավորությունը),

- հարվածի հանկարծակիությունը,
- քողարկման և իրական նպատակների թաքցման համար նպաստավոր պայմանները, ուրիշի անունից գործելու հնարավորությունը,
- տեղեկատվական ագրեսիայից նյութական հետքեր չմնալը, ինչի շնորհիվ հնարավոր չէ պարզել և պատասխանատվության ենթարկել ագրեսորին,
- հակառակորդին հեռվից (առանց նրա տարածք ներխուժելու) հարվածելու հնարավորությունը,
- տեղեկատվական հարձակման դեմ հակառակորդ պետության ռազմական ներուժի անզորությունը,
- տեղեկատվական հարվածի ծանրության աստիճանի համեմատելիությունը հակառակորդի տարածքում ռազմական գործողությունների հետևանքների հետ (օրինակ՝ խուճապ, տեխնածին աղետների առաջացում, ֆինանսաբանկային համակարգի կազմալուծում և այլն),
- տեղեկատվական հարվածին համարժեք պատասխան տալու դժվարությունը,
- դաշինքների ու միությունների ստեղծման դժվարությունը, հաճախ բարեկամ-թշնամի հստակ սահմանազատման անհնարինությունը,
- բնակչության տարբեր խավերի վրա տեղեկութային ազդեցության տարբերակվածությունը՝ պայմանավորված լսարանի առանձնահատկություններով,
- տեղեկութային ազդեցության կործանարար հետևանքների ակնառու վկայություններ չլինելը. բնակչությունը չի էլ

զգում, որ ենթարկվում է այդպիսի ազդեցության, ուստի չի կարողանում գործի դնել պաշտպանական մեխանիզմները:

Տեղեկատվական պայքարի կարևոր բաղադրիչն է հակազդեցությունը հակառակորդի տեղեկութահոգեբանական ազդեցությանը: Վերջինիս չեզոքացումը ենթադրում է հետևյալ հիմնական միջոցառումները.

ա) *կանխատեսում.* երբ բացահայտվում են սպառնալիքները և գնահատվում է քայքայիչ տեղեկութահոգեբանական ազդեցության միջոցների կիրառման վնասը: Առաջնահերթ է հակառակորդի տեղեկութահոգեբանական ազդեցության ուժերի և միջոցների ու հարվածի ուղղության պարզումը,

բ) *կանխարգելում.* ենթադրում է միջոցառումներ, որոնք նվազեցնում են հակառակորդի տեղեկութահոգեբանական ազդեցության նկատմամբ բնակչության ընկալունակությունը: Դրա հիմնական գործիքը հակաքարոզչությունն[1] է և բնակչությանը այդ ազդեցության իրական նպատակների, միջոցների ու հնարավոր հետևանքների պարզաբանումը,

գ) *բնակչության վրա տեղեկութահոգեբանական ազդեցության ընդհատում (թուլացում),* օրինակ՝ քարոզչական նյութերի ոչնչացում, հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման դադարեցում և այլն,

[1] Հակաքարոզչության հնարներից են՝ ա) հովանոցի հնարը, երբ թույլ չի տրվում, որ օտար հաղորդագրությունը հասնի հասցեատիրոջը, բ) ձագարի հնարը, երբ հաղորդագրությունը չեզոքացվում է այլ հաղորդագրությունների հանրագումարային ազդեցությամբ, գ) անիվի հնարը, երբ հաղորդագրությունը զանգվածային գիտակցության հետին պլան է մղվում ավելի ուշագրավ հաղորդագրության հրապարակ նետումով, դ) փոխարինման հնարը, երբ հերքումը հիմնվում է ոչ թե հաղորդագրության բովանդակության, այլ աղբյուրի վարկաբեկման վրա, և այլն:

դ) *տեղեկութահոգեբանական ազդեցության հետևանքների վերացում.* այդ ազդեցության արդյունավետության պատճառների և տեղեկութահոգեբանական պաշտպանության խոցելի տեղերի բացահայտում, հոգեվերականգնողական միջոցառումներ և այլն:

Տեղեկատվական պայքարը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- ակտիվություն, որն ապահովվում է նպատակների ու խնդիրների որոշակիությամբ, կանխիչ ազդեցությունների կազմակերպմամբ,
- հրատապություն և կոնկրետություն, որոնք ապահովվում են առավել կարևոր պրոբլեմներին նպատակամիտվածությամբ,
- մշտականություն, ինչը ենթադրում է բնակչության բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ տեղեկույթի մշտական հավաքում և վերլուծություն՝ հակազդեցության ընթացիկ խնդիրներին համապատասխան,
- դինամիկություն և պատեհաժամություն, որոնք ապահովվում են իրավիճակի փոփոխություններին արագ արձագանքմամբ,
- մատչելիություն, ինչը ենթադրում է պարզ՝ բնակչության համար հասկանալի փաստարկների օգտագործում,
- զգացմունքների հարուցում, այսինքն՝ ազդեցություն ոչ միայն մարդկանց բանականության, այլև զգացմունքների վրա:

Տեղեկութահոգեբանական հակազդեցության արդյունավետությունն ապահովվում է շնորհիվ այն բանի, որ պլանավորվում և իրականացվում է անընդհատ և համալիր կերպով՝ քայքայիչ ազդեցության առանձնահատկությունների, բնակչության իրական բարոյահոգեբանական վիճակի և ստեղծված իրավիճակի հաշվառմամբ:

Այսպիսով՝ համաշխարհային զարգացման արդի փուլը էական փոփոխություններ է առաջ բերել անվտանգության նկատմամբ ավանդական մոտեցումներում:

Եթե նախկինում վճռորոշ էին պետությունների մրցակցության ոչ միայն ռազմական, այլև քաղաքական, տնտեսական հնարավորությունները, ապա այսօր առաջ են եկել նոր պարամետրեր, որոնք պայմանավորում են ազգային անվտանգության համակարգում պետության տեղեկատվական ոլորտի անվտանգության տեղն ու դերը[1]:

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ»:

## Աղբյուրներ և գրականություն

1. «Воздушная армия кибер-операций КК ВВС США» (http://pentagonus.ru/publ/22-1-0-1069).
2. *Г.Дерен,* Грядущая цифровая война (http://pentagonus.ru/publ/22-1-0-1249).
3. *В.Жуков,* Взгляды военного руководства США на ведение информационной войны (http://pentagonus.ru/publ/22-1-0-175).
4. *О.А. Остапенко, П.А. Маслихов,* Обеспечение информационно-психологической безопасности. Воронеж, 2013 (http://kafedrasib.ru/index.php/o-kafedre/izdaniyakafedry/uchebnye-posobiya/352-o-a-ostapenko-p-a-maslikhov-obespechenie-informatsionno-psikhologicheskoj-bezopasnosti-ucheb-posobie).
5. *Г.Почепцов,* Информационные войны. М., 2000.
6. *А.Н. Резник,* Информационное противоборство в условиях вооруженного конфликта: содержание, технологии, тенденции. Диссертация на соискание ученой степени кандидата политических наук. М., 2004 (http://www.dissercat.com/

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՊԱՅՔԱՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

Տնտեսության, քաղաքականության, գիտության մեջ, ինչպես նաև ռազմական գործում հաջողությունն էապես պայմանավորվում է պահանջվող և ճշգրիտ տեղեկատվություն ստանալու արագությամբ: Ոչ պակաս կարևոր է թույլ չտալ, որպեսզի այդ տեղեկատվությունից օգտվի մրցակիցը կամ հակառակորդը:

Վերջին տարիներին տեղեկատվական ոլորտում մրցակցության ակտիվացումը, ինչպես նաև տեղեկատվական մրցակցության կտրուկ դրսևորումները թույլ են տալիս այդ մրցակցությունն անվանել տեղեկատվական հակապայքար:

***Տեղեկատվական հակապայքարը*** *պատերազմ է առանց ճակատային գծի, իսկ տեղեկատվական պատերազմների բազմաթիվ գործողությունների իրականացման գործընթացը գործնականորեն անհնար է բացահայտել. եթե նույնիսկ այդպիսի փաստեր նկատվում են, դրանք ամենայն հավանականությամբ մնում են անանուն[2]: Գոյություն չունեն տեղեկատվական պատերազմի իրականացման միջազգային, իրավական և բարոյական նորմեր:*

[1] http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13078

[2] http://www.5ballov.ru. «ИНФОРМАЦИОННЫЕ ВОЙНЫ. ИНФОРМАЦИОННОЕ ПРОТИВОБОРСТВО».

Աշխարհում տեղեկատվական հակապայքարի ակտիվացումը, միջազգային ահաբեկչության, ինչպես նաև մի շարք պետությունների գերիշխանության վերջին դրսևորումներն արդիական են դարձնում ՀՀ-ում տեղեկատվական ոլորտի ինչպես տեղեկատվատեխնիկական, այնպես էլ տեղեկատվահոգեբանական հարվածներից պաշտպանության խնդիրները:

***Տեղեկատվական հակապայքարը*** *համակարգերի՝ մեկը մյուսի վրա բաց և/կամ գաղտնի կերպով նպատակաուղղված տեղեկատվական ազդեցությունն է՝ նյութական ոլորտում որոշակի շահ ստանալու նպատակով*[1]:

Տեղեկատվական հակապայքար ասելով պետք է հասկանալ հակառակորդի պետական և ռազմական ղեկավարման համակարգերի, նրա ռազմաքաղաքական ղեկավարման վրա բազմակողմ տեղեկատվական ներազդեցությունը:

Այսօր հասարակության տնտեսական հզորությունն ուղղակիորեն պայմանավորվում է նրա տնօրինության ներքո գտնվող բարձր տեխնոլոգիաների, առաջին հերթին՝ տեղեկատվական ոլորտի տեխնոլոգիաների առկայությամբ:

Տեղեկատվական պատերազմում կիրառվող տեխնիկական միջոցների ոչ բարձր արժեքն էապես մեծացնում է հավանական մասնակիցների շրջանակը: Դրանք կարող են լինել առանձին պետություններն ու նրանց հետախուզական մարմինները, հանցավոր, ահաբեկչական և թմրաբիզնեսի խմբավորումները, առևտրային ընկերությունները և նույնիսկ անձինք, որոնք գործում են ոչ հանցավոր նպատակներով:

[1] http://www.ruska-ravda.com/index.php/2011040512282/stat-i/ideologija/2011-03-31-08-46-03.html

Տեղեկատվական պատերազմի բոլոր դրսևորումների առջև խնդիր է դրված ազդել հակառակորդի ենթակառուցվածքի, նրա հեռահաղորդակցության համակարգերի վրա՝ նպատակ ունենալով աղճատել ստացվող տեղեկատվությունը, հակառակորդին զրկել տեղեկատվություն ստանալու նոր հնարավորություններից կամ ոչնչացնել նրա տեղեկատվական միջոցները, ինչպես նաև ապահովել սեփական տեղեկատվական ռեսուրսների պաշտպանությունը հակառակորդի համանման գործողություններից:

Տեղեկատվական զենքի կիրառման ռազմավարական նպատակը մարդկանց գիտակցության վրա որոշակի գաղափարների, սովորությունների և վարքային կարծրատիպերի զանգվածային տարածումն ու ներդրումն է: ԶԼՄ-ից տեղեկատվություն ստանալով՝ մենք հնարավորություն ենք ունենում ուսումնասիրել պետության ազգաբնակչության, պետական ինստիտուտների և երկրի ղեկավարության վրա տեղեկատվական ու բարոյահոգեբանական ներազդման լայնածավալ օպերացիաներ: Սոցիալական ոլորտում տեղեկատվական զենքի օգտագործման վերջնական նպատակը բնակչության մեջ դժգոհությունների կամ խուճապի, ինչպես նաև տարբեր սոցիալական խմբերի ապակառուցողական գործողությունների հրահրումն է:

Բնականաբար, տեղեկատվությունը կարող է ներազդել անձի հոգեկան վիճակների, նյարդային գործընթացների, տրամադրության, ինքնագնահատականի, արժեհամակարգի և վարքի վրա: Դա պայմանավորված է տարբեր գործոններով՝ ինչպես տեղեկատվության բնույթով, տևականությամբ և ինտենսիվությամբ, այնպես էլ տեղեկատվությունն ընդունող անձի առանձնահատկություններով, դրդապատճառներով, անձնային կայու-

նությամբ, վերահսկողության լոկուսով[1], կենսափորձով, ինտելեկտուալ զարգացածությամբ և այլն: Օրինակ, վերահսկողության արտաքին լոկուսի և արտաքին դրդապատճառների գերակայությամբ անձն առավել զգայուն է արտաքին աշխարհից եկող տեղեկատվության հանդեպ:

Տեղեկատվական ազդեցության ձևերից է հասարակական կարծիքը: «Եթե մեր ինքնահարգանքը, ինքնագնահատականը կախված են այլ մարդկանց գնահատականներից, մենք գտնվում ենք հոգեբանական վտանգի մեջ» (*Ա.Մասլոու*): Կարելի է տրամաբանել, որ նման դեպքերում անձի վերաբերյալ տարածված բացասական տեղեկատվությունը, բացասական հասարակական կարծիքը կարող են դառնալ ինքնագնահատականի, տրամադրության անկման, ասթենիկ վիճակների զարգացման, նույնիսկ ընկճախտի ձևավորման պատճառ: Նմանապես հնարավոր է ներազդել նաև անձի պետական, ազգային ինքնագիտակցության վրա: Օրինակ, ՆԱՏՕ անդամ երկրները Իրաքում, Եգիպտոսում, Լիբիայում այդ պետությունների ազգաբնակչության շրջանում տեղեկատվական գործողություններ են իրականացնում՝ ակնարկելով նրանց մոտ տիրող բռնատիրական, միապետական կարգերը, անազատությունը, դիկտատուրան, ինչի հետևանքով ազգաբնակչության շրջանում փորձում են ձևավորել բացասական հասարակական կարծիք սեփական իշխանությունների նկատմամբ՝ հրահրելով նրանց դեմ, ինչն էլ հաճախ հանգեցնում է քաղաքացիական պատերազմների և հեղափոխությունների:

[1] Վերահսկողության լոկուսը հասկացություն է հոգեբանության մեջ, որը բնութագրում է անձի՝ իր հաջողությունները կամ անհաջողությունները ներքին կամ արտաքին գործոններին վերագրելու հատկությունը: Կիրառության մեջ է մտցվել սոցիալական հոգեբան Ջուլիան Ռոթերի կողմից 1954թ.:

Հասարակական կարծիքի ձևավորման և տեղեկատվական ներազդման ձևերից են նաև տարբեր երկրների կողմից իրենց զինտեխնիկայի ցուցադրումը, լրատվական միջոցներով բանակի հասցեին մշտապես հնչող իրական և անիրական գովասանքները, ինչը նպատակ ունի ձևավորել հզոր, պետականորեն կայուն երկրի իդեալական կերպար, ինչն էլ ենթադրաբար կնպաստի բնակչության շրջանում ապահովության զգացման ձևավորմանը, իսկ հակառակորդ երկրներում՝ վախի մթնոլորտի ամրապնդմանը: Սակայն իրական և իդեալական հնարավորությունների ներկայացումը պետք է մոտ լինի իրականությանը, քանզի նրանց անջրպետը հաճախ ծիծաղաշարժ է, ինչպես այն երիտասարդի մոտ, ով փորձում է իր վախկոտ և թուլամորթ դեմքը թաքցնել արտասահմանյան շքեղ մեքենաների, իր ազդեցիկ, մեծահարուստ բարեկամների և բրենդային հագուստների ներքո:

Տեղեկատվական ներազդման ձևերից է նաև ներշնչանքը: Ներշնչանքի հզոր ազդեցությունն առավել ակնհայտ դարձնելու համար բավական է նկատել մարդկանց տարբեր աղանդների մեջ ներգրավելու եղանակը: Հաճախ աղանդների մասնակից են դառնում ցածր ինքնարժեքով, անլիարժեքության զգացումով, հոգեկան անկայուն վիճակներում գտնվող մարդիկ, ովքեր առավել ներշնչվող են, կարիք ունեն արժևորման: Նկատելով նրանց խոցելի կողմերը՝ հատուկ պատրաստություն անցած անձինք տեղեկատվական ներշնչանքի միջոցով, նրանց ինքնագնահատականի, ինքնասիրության վրա ներազդելով, ներքաշում են աղանդավորական խմբավորումների մեջ: Ներշնչանքի, հուզական վարակի մեխանիզմներն առավել ուժգին են ազդում

ամբոխի հոգեբանության վրա: Ամբոխը տարերայնորեն միավորված մարդկանց խումբ է, որին բնորոշ են գիտակցության նեղացումը, ենթագիտակցական գործընթացների ակտիվացումը, հուզական վիճակների գերակայությունը: Դա է պատճառը, որ ցանկացած տրամադրություն հուզական վարակի պես փոխանցվում է ամբոխի մասնակիցներից մեկից մյուսին՝ նպաստելով բնազդային հակազդումների, խուճապի և անկառավարելի վարքի դրսևորմանը: Այդ մեխանիզմները կիրառվում են քաղաքական հավաքների, ցույցերի ժամանակ:

Տեղեկատվական օպերացիաներն առավել ազդեցիկ են այն երկրների ազգաբնակչության շրջանում, որտեղ ցածր է կենսասոցիալական ապահովության մակարդակը, երբ բավարարված չեն մարդկանց սննդի և ֆիզիոլոգիական տարրական պահանջմունքները: Մարդիկ, ովքեր հացի խնդիր ունեն, բնականաբար, ավելի խոցելի են, նրանք անտարբեր են դառնում մնացյալ ամեն ինչի նկատմամբ, քանի որ կենտրոնացնում են ուշադրությունը գլխավորապես սննդի հայթայթման վրա: Իսկ անտարբերությամբ համակված մարդկանց ավելի դյուրին է կառավարել, ներազդել և կախվածության մեջ գցել, ինչն էլ հաճախ կիրառում են զարգացած պետությունները սոցիալապես անապահով երկրների նկատմամբ:

Վերջապես, տեղեկատվական զենքի կիրառման նպատակներից է հակառակորդի տարածքում տեխնոլոգիական մեծածավալ աղետների առաջացումը, որի հետևանքով խափանվում են տեխնոլոգիական գործընթացներն ու օբյեկտների ղեկավարումը:

Հակառակորդի դիմադրողականությունը կարելի է կոտրել ոչ միայն հրթիռառմբահարումներով: 20-րդ դարի 30-ական թթ. Եվրոպայում բուռն զարգանում էր համեմատաբար նոր ուղղություն՝ քարոզչությունը: Այդ ժամանակահատվածում էին տեղի ունենում ԶԼՄ-ի՝ որպես զենք կիրառելու առաջին հաջողված քայլերը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում բացարձակ առաջատարները գերմանացիներն էին[1]: Գերմանացի մասնագետներին հաջողվեց ստեղծել այնպիսի ներքին տեղեկատվական դաշտ, որտեղ ուղղակիորեն անէանում էին արտաքին տեղեկատվածին վտանգները: Ռեյխի քաղաքացիները վստահ էին իրենց երկրի անպարտելիությանը և արժեքների մաքրությանը, որի վրա էլ հիմնվում էր ողջ գաղափարախոսությունը: Ստեղծվել էր տեղեկատվական դաշտի համապատասխան բովանդակության համար պատասխանատու ամբողջ համակարգ՝ մամուլ, ռադիո, կինեմատոգրաֆ, ձայնագրության ստուդիաներ, տեսողական գովազդ և այլն: Ռեյխը լրջորեն աշխատում էր նոր մշակույթի և դրա տարածման միջոցների ստեղծման ուղղությամբ: Գերմանական կարճալիք ռադիոն հետևողականորեն աշխատում էր արտասահմանյան լսարանների հետ՝ նրանց ենթագիտակցության մեջ ներդնելով ամենաառաջատար և անհաղթելի պետության իր կերպարը: Կարելի է ասել, որ այլ պետություններում նմանատիպ համակարգերի ներդրումը գերմանացիների ակտիվության հակազդման հետևանք էր: Գերմանական քա-

[1] http://voskanapat.info/news/globalnoe_informacionnoe_protivoborstvo_novogo_tipa/2009-10-31-88

ռոզչական տեխնոլոգիաները փոխառել են այնպիսի պետություններ, ինչպիսիք են ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և այլն: Սառը պատերազմի սկզբնական փուլում այդ հակամարտության մեջ ներգրավված գրեթե բոլոր պետությունները որպես տեղեկատվահոգեբանական ներազդեցության միջոց օգտագործում էին ԶԼՄ-ն, մասնավորապես՝ ռադիոն:

20-րդ դարի 50-ական թթ. Պենտագոնի մասնագետներն ավիացիոն թռիչքները սկսեցին կիրառել որպես հոգեբանական զենք: Ռմբահարություններին ուղեկցող քառսը և խուճապը, կենդանի ուժի, ռազմական, արդյունաբերական և քաղաքացիական օբյեկտների ոչնչացման ավանդական խնդիրների համեմատ, մղվում էին առաջին պլան: Ռմբահարումները սկսեցին դիտարկվել ոչ թե որպես հակառակորդի ցամաքային ներխուժումը կանխարգելող ենթակառուցվածքների ոչնչացման միջոց, այլ որպես պաշտպանվող կողմի դիմադրությունը դադարեցնելու համոզման մեխանիզմ[1]:

Եվ այսպես, 20-րդ դարի 80-ական թթ. տեղեկատվահոգեբանական հակամարտությունը սահմանվեց որպես տեխնածին և հումանիտար մակարդակներից բաղկացած ամբողջություն, որն ապահովում է հետևյալ խնդիրների իրականացումը[2].

- հակառակորդի կապուղիների և ղեկավարման ուղիների արգելափակում կամ վնասում,
- ապատեղեկատվության տարածում,

[1] http://voskanapat.info/news/globalnoe_informacionnoe_protivoborstvo_novogo_tipa/2009-10-31-88

[2] Информационное оружие - главное оружие 21-го века. Им покоряют страны, уничтожают народы, Евгений Фадеев.

- հակառակորդի թիկունքում լարվածության և խուճապի մթնոլորտի ստեղծում՝ պայմանավորված հարվածների մշտական սպասումով,
- հակառակորդի բարոյալքման նպատակով սոցիալական գիտակցության վրա ներազդեցություն:

Նշված ժամանակաշրջանում հատուկ տեղեկատվական օպերացիաների վերաբերյալ առկա էին խիստ գծային պատկերացումներ, իսկ քարոզչական ջանքերն առաջնորդվում էին հետևյալ գծապատկերով՝ ղեկավարման ազդեցություն - ցանկալի արդյունք: Այսինքն՝ ազդեցության ուժի ավելացումը նպաստում է հակազդեցության ուժի մեծացմանը: Այնուամենայնիվ, սկսած 1980-ական թթ.՝ Արևմուտքում առաջին անգամ նկատեցին, որ ազդեցության արդյունավետությունը ոչ միշտ է ուղիղ համեմատական նրա ինտենսիվությանը:

Ուկրաինայում «նարնջագույն» հեղափոխությունը ԱՄՆ-ին արժեցավ մոտ $14 մլն: Այն դեպքում, երբ Իրաքում ծախսված գումարի չափը, վերջին տվյալներով, անցել է $450 մլրդ-ի սահմանը: 1960-ականներին ԱՄՆ նախագահ Նիքսոնի խոսքերը դարձան մարգարեական: Նա համարում էր, որ տեղեկատվության մեջ ներդրված ամեն մի դոլարն ավելի արժեքավոր է, քան սպառազինության համակարգի ստեղծման համար ներդրված յուրաքանչյուր տասը դոլարը, քանի որ վերջինս դժվար թե երբևէ կիրառվի, այն դեպքում, երբ տեղեկատվությունն աշխատում է ամեն ժամ և ամենուր: Ռազմական ներխուժումը հետզհետե դառնում էր ծայրահեղ միջոց, որը կիրառվում էր, երբ տեղեկատվական օպերացիաների մասնագետներն ի վիճակի

չէին լուծել իրենց վրա դրված խնդիրները:

1970-ականն թթ. սկզբին և 90-ական թթ. վերջին տեղեկատվական հակապայքարի ոլորտում միանձնյա առաջատարն ամերիկացիներն էին: Նրանց թվում էր, թե հաջողությամբ են իրականացնում գլոբալ տեղեկատվական ներուժի օգտագործման ինտենսիվացմանը և այլ երկրների դեմ սեփական ներուժի սահմանափակմանն ուղղված խնդիրները: Ըստ 2003թ. տվյալների, չինական մասնագետների հաշվարկով զարգացած և զարգացող պետությունների միջև տեղեկատվական փոխանակման 80%-ը կազմել է տեղեկատվության հոսքը զարգացած պետություններից դեպի զարգացող պետություններ: Ներկայումս նկատվում են այդ բալանսի հավասարեցման միտումներ[1]: Վերջին տասնամյակներում տեղեկատվության և արտաքին հաղորդակցության հարցերում ակտիվություն է դիտվում այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Չինաստանը, Պարսկաստանը և այլն:

Տեղեկատվական հակապայքարին ուղղված մեծ հետաքրքրությունը պատահական չէ, քանի որ տեղեկատվությունը դառնում է այնպիսի զենք, ինչպիսիք են հրթիռները, արկերը և այլն: Այժմ արդեն պարզ է, որ տեղեկատվական հակապայքարը դառնում է այն գործոնը, որը զգալի ազդեցություն է ունենալու ապագայում ծավալվող պատերազմների սկզբի, ընթացքի և արդյունքի վրա:

Ուստի, մեկ անգամ ևս պետք է նշել, որ անշփում պատերազմներում տեղեկատվական հակապայքարը պատերազմող կողմերի պայքարի նոր, ռազմավարական ձև է, որի դեպքում կի-

[1] http://voskanapat.info/ Глобальное информационное противоборство нового типа.

բառվում են հակառակորդի տեղեկատվական ոլորտի վրա ներազդող և պատերազմի ռազմավարական նպատակներին հասնելու սեփական շահեր հետապնդող հատուկ ձևեր և միջոցներ: Սակայն պետք է հիշել, որ տեղեկատվական հակապայքարը, որպես ռազմական գործողությունների ապահովման ձև, գործնականորեն երբևէ չի ընդհատվել նախկինում ծավալված բոլոր պատերազմներում, այն ընթանում է նաև հիմա, քանի որ կողմերը մշտապես ձգտում են վերահսկել հակառակորդի տեղեկատվությունը ոչ միայն պատերազմական, այլ նաև խաղաղ պայմաններում:

Հավանաբար, անշփում պատերազմներում տեղեկատվական հակապայքարի այնպիսի ձևեր կկիրառվեն, ինչպիսիք են *ռազմավարական քողարկումը, ապատեղեկատվությունը, ռադիոէլեկտրոնային հակապայքարը, տեղեկատվական ենթակառուցվածքային օբյեկտների ֆիզիկական ավերումը և ոչնչացումը, հակառակորդի համակարգչային ցանցերի վրա «հարձակումները», «տեղեկատվական ներազդեցությունը», «տեղեկատվական ներխուժումը» կամ «տեղեկատվական ագրեսիան»:* Այս բոլորը կարող են իրականացվել հատուկ մշակված ներազդման միջոցներով՝ տեղեկատվական համակարգ ներդրված և որոշակի հրամանով գործարկվող համակարգչային վիրուսներով, տրամաբանական արկերով: Կարելի է կիրառել նաև «հոգեբանական հարվածները» կամ «հոգեբանական ագրեսիան», օրինակ՝ ուղղակիորեն հակառակորդի կենդանի ուժին կամ նրա ազգաբնակչությանն ուղղված հոգևոր բնույթի տեղեկատվությունը:

Տեղեկատվական պայքարի էությունը, ինչը մեծ վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության, այդ թվում նաև ՀՀ-ի համար, ինչ-որ պետության կամ պետությունների խմբի նկատ-

մամբ տեղեկատվական ոլորտում էական առավելությունների հասնելու կարողությունն է, այն թույլ է տալիս բավական արդյունավետ մոդելավորել «հակառակորդի» վարքը, և շահավետ ազդեցություն ունենալ նրա վրա: Ընդ որում, կարելի է հաստատել, որ պետությունները, որոնք պարտվել են տեղեկատվական պատերազմում, պարտվում են «ընդմիշտ», քանի որ իրավիճակի փոփոխմանն ուղղված նրանց հնարավոր քայլերը պահանջելու են նյութական և ինտելեկտուալ հսկայական ծախս, և վերահսկվելու, չեզոքացվելու են հաղթող կողմի միջոցներով: Նման պատերազմներում օպերացիաները միշտ չէ, որ պետք է իրականացվեն զինված ուժերի կողմից և ուղղվեն ռազմական օբյեկտների դեմ: Կառավարության այլ գերատեսչությունները, կազմակերպություններն ու կառույցները, արտադրական և կոմերցիոն կառուցվածքները նույնպես կարող են մասնակցություն ունենալ և ինքնուրույն իրականացնել տեղեկատվական օպերացիաներ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ցանկացած հակամարտության ընթացքի և արդյունքի վրա:

Ապագայում ծավալվող պատերազմներում տեղեկատվական ներուժի տիրապետումը դառնում է այնպիսի անհրաժեշտ բաղկացուցիչ, ինչպիսին էր անցյալի պատերազմներում միջոցներին, սպառազինությանը, ռազմամթերքին, տրանսպորտին և այլնին տիրելը: Ապագայի անշփում պատերազմներում տեղեկատվական պայքարի հաղթանակով, փաստորեն, կհասնենք պատերազմի ռազմավարական և քաղաքական նպատակներին, որը հավասարազոր է հակառակորդի զինված ուժերի ջախջախմանը, նրա տարածքի զավթմանը, նրա տնտեսական ներուժի խափանմանը և քաղաքական կարգի տապալմանը:

## Աղբյուրներ և գրականություն


1. Политическое цунами. Аналитика событий в Северной Африке и на Ближнем Востоке: под ред. С.Кургиняна, М., 2011. URL. http://www.kurginyan.ru/books/polittsunami.pdf.
2. *Почепцов Георгий*, Информационные войны, 2000.
3. http://www.dissercat.com/content/informatsionnoe-protivoborstvo-v-usloviyakh-vooruzhennogo-konflikta-soderzhanie-tekhno.
4. http://pentagonus.ru/publ/22-1-0-175. Взгляды военного руководства США на ведение информационной войны, Полковник В. Жуков.
5. http://pentagonus.ru/publ/22-1-0-1069. Воздушная армия кибер-операций КК ВВС США.
6. http://pentagonus.ru/publ/22-1-0-824. Роль США в осуществлении "цветных революций" в зарубежных странах, Полковник В. Кузьмин.
7. http://pentagonus.ru/publ/22-1-0-1249, Грядущая цифровая война. Гленн Дерен.
8. http://www.dissercat.com/content/informatsionnoe-protivoborstvo-v-usloviyakh-vooruzhennogo-konflikta-soderzhanie-tekhno. Информационное противоборство: теоретико-методологические основы и особенности в условиях вооруженного конфликта.

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ[1]

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին առավել զարգացած պետություններում տեղեկատվական տեխնոլոգիաների, հասարակական կյանքի և հատկապես զինված ուժերի լայնածավալ տեղեկատվայնացումն էապես փոխեց պետական կառույցների տեղեկատվական գործունեության բնույթը, մեթոդներն ու ձևերը: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները կարևոր ազդեցություն ունեցան 21–րդ դարասկզբի ռազմական գործողությունների և դրանց վարման ռազմավարության ու մարտավարության ձևերի, միջոցների ընտրության վրա: Ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակներում հավանական կամ գործող հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակայության հասնելու ձգտումը դարձել է պետությունների հիմնական խնդիրներից մեկը:

Հակառակորդի նկատմամբ համապատասխան տեղեկատվական գերակայություն ապահովելու հիմնական գործիքը *տեղեկատվական գործողությունն է*[2], *որը* տեղեկատվական հնա-

[1] «21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, # 1 (65), 2016:
[2] http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID13078

րավորությունների համակարգված օգտագործումն է՝ ուղղված հակառակորդի որոշումների ընդունման պրոցեսի խափանմանը, աղավաղմանը կամ վերահսկմանը, ինչպես նաև նմանատիպ գործողություններից սեփական ուժերի պաշտպանմանը:

Տեղեկատվական հակամարտության ոլորտում ԱՄՆ զինված ուժերն անհերքելի առաջատարն են: Այսօր ԱՄՆ զինված ուժերում մեծ ուշադրություն են դարձնում տեղեկատվական գործողությունների հայեցակարգային հիմունքների զարգացմանը: Վերջին տարիներին ԱՄՆ զինված ուժերը կազմակերպել են մի շարք թեմատիկ քննարկումներ՝ *ԱՄՆ շտաբների պետերի կոմիտեի գլոբալ օպերացիաների վարչության ղեկավարի տեղակալի և քաղաքական հարցերով ՊՆ տեղակալի ապարատի տեղեկատվական գործողությունների վարչության պետի ղեկավարությամբ:* Քննարկվել է տեղեկատվական գործողությունների տեսության զարգացման հիմնահարցը, առավել մեծ ուշադրություն է դարձվել ԱՄՆ զինված ուժերի տեղեկատվական գործողությունների համակարգված վերլուծություններին՝ հաշվի առնելով դրանց իրականացումը *գլոբալ ինտեգրված օպերացիաների* շրջանակներում (գլոբալ ինտեգրված օպերացիաների մասին ներկայացված է «Միասնական ուժեր 2020» ազգային զինված ուժերի շինարարության և կիրառման հիմնարար հայեցակարգում: Այն ԱՄՆ ԶՈՒ հիմնարար փաստաթղթերի պատրաստման կանխորոշող և ուղղորդող փաստաթղթերից է): Տեղեկատվական գործողությունների տեսության զարգացման համար առաջին հերթին հարկավոր է հաշվի առնել գլոբալ ինտեգրված օպերացիաների հետևյալ բաղկացուցիչները.

- զորքերի (ուժերի) ղեկավարումը,
- օպերացիաների ընթացքում նախաձեռնության հափշտակումը, պահպանումը և ժամանակին կիրառումը, այդ գործողություններում համաձայնեցվածության ապահովումը,
- համագործակցության ապահովումը,
- ռազմական օպերացիաների անցանկալի հետևանքների, այդ թվում զորքերի (ուժերի) անձնակազմի և խաղաղ բնակչության կորուստների նվազեցման ապահովումը:

«Զորքերի ղեկավարում» եզրույթը ենթադրում է միջոցառումների համախումբ, որոնց գրագետ իրականացումը թույլ է տալիս հրամանատարական կազմին արդյունավետ և մշտապես ղեկավարել ենթակաների գործողությունները:

Անշուշտ, հրամանատարը ենթականերին հնարավորություն է տալիս որոշումներ կայացնել և գործել ինքնուրույն, իհարկե՝ հիմնվելով օպերացիայի մտահղացման և փոփոխվող իրավիճակի դինամիկայից բխող խելամիտ նախաձեռնության վրա (ԱՄՆ ցամաքային զորքերի *FM 6-0 Mission Command*; 2003թ. օգոստոս):

Տեղեկատվական գործողությունների ոլորտի մասնագետները նշում են, որ զորքերի (ուժերի) ղեկավարման ճկուն և հարմարեցված մոտեցումներն են հրամանատարներին թույլ տալիս առավել օպերատիվ լուծել իրենց առջև ծառացած խնդիրները՝ այդպիսով ձևավորելով ռազմական գործողությունների վարման ավելի արդյունավետ միջավայր:

«Միջավայր» ասելով հասկանում ենք այն գործոնները, պայմանները և իրավիճակները, որոնք հնարավորություն են

տալիս կանխատեսել (ստեղծել) և վերահսկել իրավիճակի զարգացումն ինչպես լոկալ, տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակով: Որպես օրինակ կարելի է նշել «Ազատություն Իրաքին» օպերացիայի ընթացքում գրանցված յուրահատուկ դեպքերը, երբ ԱՄՆ զինված ուժերի մարտական գործողությունների տեղեկատվական ապահովման ընթացքում ինքնուրույնություն տրվեց մարտավարական խմբերի գործողություններին: Դա հնարավորություն ընձեռեց նրանց ինքնուրույն որոշել տվյալ պահին անհրաժեշտ տեղեկատվական հաղորդագրությունների բնույթը, ինչպես նաև դրանց տարածման միջոցներն ու ձևերը, ինչն էլ տվեց դրական արդյունք:

Զորքերի ղեկավարման ադապտացված մեթոդը կարևոր է ԱՄՆ զինված ուժերի տեղեկատվական գործողությունների համար: Օրինակ, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործողությունների ժամանակ իրականանում է անմիջական շփում *թիրախային լսարանի* հետ:

Ժամանակակից պետությունների զինված ուժերի կողմից օպերացիաների ժամանակ տեղեկատվության վրա հակառակորդի ներազդման հնարավորության սահմանափակումը (արգելումը) և թիրախային լսարանի հետ նրա աշխատանքների խափանումն իրենց կարևորությամբ գրեթե հավասարազոր են տարածքների զավթման միջոցառումներին: Նման խնդիրների իրականացման համար հրամանատարը պետք է ճիշտ գնահատի այն տեղեկատվական տիրույթը, որում նա գործում է, և ձգտի տեղեկատվական գործողությունների ժամանակ մշտապես ներազդել թիրախային լսարանի վրա, ապահովել, որպես-

զի տեղեկատվական տիրույթում չառաջանա *«տեղեկատվական դատարկություն»,* որը կարող է լրացնել հակառակորդը: Կարևոր է, որ տեղեկատվական աղբյուրների առատության պայմաններում զինված ուժերի կողմից թիրախային լսարանին տրվող մեծաքանակ տեղեկատվությունը համապատասխանի զինված ուժերում անցկացվող միջոցառումներին:

Զինված ուժերի տեղեկատվական գործողությունների տեսական հիմքերի ձևավորման ընթացքում հարկավոր է հաշվի առնել օպերացիոն միջավայրում ներգրավված տեղեկատվական հնարավորությունների փոխհամաձայնեցվածության բարձր մակարդակի ապահովումը (ցամաքային, օդային, ցանցային և այլ ոլորտներում), քանի որ հակառակորդի նկատմամբ տեղեկատվական առավելության կարելի է հասնել միայն կոնկրետ համաձայնեցված և փոխլրացնող միջոցառումների դեպքում: Կարևոր է նաև, որ տեղեկատվական գործողությունների իրականացման և նմանատիպ միջոցառումների արդյունավետության բարձրացման համար հատուկ ուշադրություն դարձվի միջգերատեսչական համագործակցությանը[1]: Ակնկալվում է, որ այդպիսի կապերի հաստատումը, ինչպես պաշտպանության նախարարության ներսում, այնպես էլ գերատեսչությունների միջև, հնարավորություն կտա ընտրել համապատասխան գործ-

[1] Օրինակ, Աֆղանստանում ԱՄՆ պաշտպանության նախարարության և տեղեկատվական գործողությունների մասնագետները ռազմավարական հաղորդակցային միջոցառումներ իրականացնելիս համագործակցել և աշխատել են Սպիտակ տան միջկրոնական նախաձեռնության վարչության, Ջորջ Մարշալի անվան Եվրոպական անվտանգության հարցերի կենտրոնի, Պետքարտուղարության, ԿՀՎ, ՆԱՏՕ ԶԼՄ օպերատիվ կենտրոնի, ՄԱԿ տարբեր առաքելությունների և այլոց հետ:

ընկերներ, ովքեր կարող են լուծել տեղեկատվական գործողությունների այս կամ այն կոնկրետ խնդիրը, ինչն իր հերթին թույլ է տալիս փոքրաթիվ ուժերով և միջոցներով գտնել ռազմական օպերացիաների խնդիրների օպտիմալ լուծումներ:

Համաձայն ռազմական փորձագետների, մարտական գործողությունների ժամանակ առկա է, այսպես կոչված, «մահաբեր զենքի» կիրառման շեմ՝ կրիտիկական կետ: Այդ կետն անցնելով՝ զինված ուժերը ռիսկի են դիմում հայտնվել այնպիսի իրավիճակում, որի դեպքում խաղաղ բնակչությունը և համաշխարհային հանրությունը խիստ հակազդում և քննադատում են այդ գործողությունները: Այդ իսկ պատճառով հրամանատարները պետք է գիտակցեն, որ *յուրաքանչյուր ռազմական օպերացիայի (մարտական գործողության) նպատակն է ստիպել ու հարկադրել հակառակորդին վայր դնել զենքը և դադարեցնել դիմադրությունը և ոչ թե ֆիզիկապես ոչնչացնել նրա ռազմական տեխնիկան ու անձնակազմը:* Այդ առումով տեղեկատվական գործողությունները հանդիսանում են «ոչ մահաբեր ելքով զենք»՝ նվազեցնելով այդ գործողությունների բացասական հետևանքները: Օրինակ, Աֆղանստանի պատերազմական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Թալիբանի» գրոհայինների տեղեկատվական գործողությունների վարման հնարավորություններից էր արդյունավետ հակաօդային պաշտպանությունը: Հետևապես, բնավ կարևոր չէ, թե ինչպես է չեզոքացվել ռազմական ինքնաթիռը՝ խոցվել է հրթիռո՞վ, թե՞ «իջեցվել» է թշնամու պրոպագանդայի միջոցով: Զարգացնելով այս թեման՝ նշենք, որ ըստ ԱՄՆ զինված ուժերի հրամանատարության հրահանգի, «տեղեկատ-

վական գործողություններ պլանավորող մարմինների գլխավոր նպատակը լինելու է մահաբեր և ոչ մահաբեր զինատեսակի կիրառման կրիտիկական հարաբերակցության սահմանումը՝ զորքերի տեղեկատվական գործողությունների կիրառման հնարավորությունները բարձրացնելու և ռազմական օպերացիաների նպատակներն ավելի արագ իրականացնելու համար»[1]: *Ներկայումս չկա այնպիսի հստակ սխեմա (ալգորիթմ), որի շնորհիվ հնարավոր լինի գնահատել տեղեկատվական գործողությունը:* Որոշ երկրների ԶՈՒ մասնագետները կարծում են, թե ժամանակն է ստեղծել փաստաթուղթ, որը նվիրված կլինի *տեղեկատվական գործողությունների գնահատմանը:* Այդ առիթով ԱՄՆ ՊՆ նախկին նախարար Լեոն Փանետան նշում էր, որ այդպիսի միջոցառումների արդյունավետությունը (օրինակ՝ ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովումը) բարդ է հաշվարկել, դժվար է կանխորոշել տեղեկատվական գործողությունների իրականացմանն անհրաժեշտ այն ուժերն ու միջոցները, որոնց կիրառումը կարող է հակառակորդի դիմադրության դադարեցման պատճառ լինել: Ֆինանսական միջոցների սահմանափակ պայմաններում տեղեկատվական գործողություններում ավելի արդիական է դառնում «արժեք/արդյունավետություն» հարաբերակցությունը:

Հիմնվելով վերոնշյալի վրա՝ ԱՄՆ զինված ուժերի տեղեկատվական գործողությունների միասնական կենտրոնում

[1] Այս գաղափարներն արծարծված են ԱՄՆ ԶՈՒ շտաբների պետերի կոմիտեի JP 3-13 «Տեղեկատվական գործողություններ» կանոնադրություններում, ինչպես նաև JP 3-13. XXX կանոնադրությունների շարքում, որոնք ուղիղ կապ ունեն տեղեկատվական գործողությունների հետ:

մշակվում է ութ քայլից բաղկացած հստակ միջոցառումների ալգորիթմով գնահատման ծրագիր: Այն ընդգրկում է.

1. տեղեկատվական տարածության բնութագրումը,
2. ռազմական օպերացիաների պլանում (պլանավորման մեջ) տեղեկատվական գործողության ներառման անհրաժեշտության գնահատումը,
3. տեղեկատվական գործողությունում տեղեկատվության կիրառման պահանջարկի և տվյալների հայթայթման ուսումնասիրումը,
4. տեղեկատվական գործողության գնահատման ելակետային տվյալների կազմումը,
5. տեղեկատվական գործողության և հետախուզական ապահովման միջոցառումների իրականացումը,
6. տեղեկատվական գործողության գնահատման համար տեղեկատվական տիրույթի դիտարկումն ու տվյալների հավաքագրումը,
7. ստացված տվյալների վերլուծությունը, տեղեկատվական գործողության գնահատումը,
8. հրամանատարին զեկույցի ներկայացումը՝ ստացված արդյունքների և առաջարկությունների վերաբերյալ:

Բացի այդ, խորհուրդ է տրվում գործողությունների գնահատումն իրականացնել ինչպես օպերացիաների մոդելավորման կամ հրամանատարաշտաբային զորավարժությունների նախապատրաստման ժամանակ, այնպես էլ դրանց անցկացման ընթացքում և ավարտից հետո: Որպես տեղեկատվա-հոգե-

բանական գործիք՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև տպագիր ԶԼՄ-ին:

Տեղեկատվական գործողությունների տեսական հիմքերի զարգացմանը զուգահեռ՝ կարևոր է ուսումնասիրել դրանց պլանավորման մասնագետների ուսուցանման և պատրաստման հեռանկարները: Տեղեկատվական գործողությունների պլանավորման մասնագետները պետք է նախնական գիտելիքներ ունենան հետևյալ 6 ոլորտում.

***1. Տեղեկատվական գործողությունների տեսություն, միջմշակութային շփումներ և տեղեկատվական տիրույթներ***

Այս կետը ներառում է.

- Զանգվածների հոգեբանության, անձի էթնիկ-մշակութային առանձնահատկությունների ուսումնասիրումը, որոնք կարող են ազդել մարդու կողմից տեղեկատվության ընկալման և վերծանման պրոցեսի, որոշում ընդունելու և այն իրականացնելու վրա:
- Ռազմական (տեղեկատվական) գործողությունների վարման ընթացքում հնարավոր ներազդեցության հաշվարկումը տեղեկատվական ոլորտի և տեղեկատվական տարածության ու դրանից բխող ֆիզիկական առանձնահատկությունների վրա:

***2. Կրիտիկական մտածողություն և շփման կանոններ***

Այստեղ անհրաժեշտ է ուսումնասիրել հետևյալ հարցերը.

- բարդ սոցիալական, տեխնիկական համակարգերի, հաղորդակցման պրոցեսների հերթականության և գործառնության սկզբունքները,

- բարդ խնդիրների լուծման նպատակով վերլուծական մեթոդների ու ձևերի կիրառումը,
- մտածողության, հոգեբանության ընդհանուր օրինաչափությունների և սկզբունքների իմացությունը:

### *3. Տեղեկատվական կարողությունների կազմը և դրանց կիրառումը տեղեկատվական գործողություններում*

Պետք է նախապես ուսումնասիրել ԶՈՒ տեղեկատվական հնարավորությունները, միջգերատեսչական գործընկերների հետ որոշել համատեղ կիրառվող կազմակերպությունները, թիրախային լսարանը, ինչպես նաև տեղեկատվական հաղորդագրությունների նպատակները, թեմաները, դրանց տեսակները և տարածման ձևերը ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման ընթացքում: Կարևոր է, որ ուսումնասիրվեն նաև տեղեկատվական գործողությունների անցկացմանը վերաբերող իրավական հարցերը: Հարկ է ուսումնասիրել և վերլուծել այդ ոլորտին վերաբերող առաջավոր փորձը՝ հաշվի առնելով ապագա պատերազմներում դրանց կիրառման հնարավորությունները:

### *4. Համատեղ, միջգերատեսչական և միասնական տեղեկատվական գործողությունների պլանավորում*

Միջգերատեսչական գործընկերների և ոչպետական կազմակերպությունների հետ համագործակցելիս հարկավոր է.

- իմանալ տեղեկատվական գործողությունների իրականացման կանոնները, սկզբունքները, խնդիրներն ու հնարավորությունները, սահմանափակումներն ու միջոցները, գործողությունների ալգորիթմը,

- Զինված ուժերում առկա տեղեկատվական միջոցների և ուժերի կիրառման դեպքում ուղղորդվել պետության նախագահի և պաշտպանության նախարարի կողմից, իրազեկ լինել նպատակի իրականացման համար նրանց ընդունած միջոցներին և մեխանիզմներին,
- ամենօրյա գործունեության և արտակարգ իրավիճակների ժամանակ կարողանալ կանխորոշել Զինված ուժերի տեղեկատվական գործողությունների իրականացմանն անհրաժեշտ միջոցների պահանջարկը, ինչպես նաև ապահովել տեղեկատվական գործողություններն անհրաժեշտ ռեսուրսներով՝ ըստ պաշտպանության նախարարության պահանջների:

### *5. Տեղեկատվական գործողությունների հետախուզական ապահովումը*

Տեղեկատվական գործողությունների հետախուզական ապահովումը ռազմական գործողության պլանավորման ալգորիթմում առանցքային դեր և նշանակություն ունի: Պետք է կարողանալ գնահատել ունեցած հետախուզական ուժերն ու միջոցները, դրանց հնարավորությունները և կիրառման մասշտաբները, տիրապետել հետախուզական տվյալների հավաքման, վերամշակման, վերլուծության և բաշխման հմտություններին, կանխագուշակել հակառակորդի մտահղացումները, ինչպես նաև գնահատել հետախուզական և այլ գործողություններ վարելու նրա հնարավորությունները:

### *6. Նպատակակետերի բաշխում, նշանադրում և ներազդում*

Այս ոլորտի մասնագետները պետք է տիրապետեն.

- տեղեկատվական նշանակետերի համադրման, սինքրոնացման և ներազդման հմտություններին,
- կարողանան ընտրել և կանխորոշել նախընտրելի նշանակետեր, այդ թվում կրիտիկական, անհրաժեշտ ուժերը և միջոցները, ինչպես նաև դրանց վրա ներազդելու մասշտաբները և տևողությունը,
- իրականացնել տեղեկատվական գործողության գնահատում, հակառակորդի տարբեր համակարգերի վրա ներազդեցության մոդելավորում, իմանալ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ու կարողանալ կիրառել դրանք նպատակակետերի բաշխման և նշանադրման պրոցեսների ժամանակ:

Համաձայն մեր դիտարկման՝ տեղեկատվական ոլորտի այս հմտություններին տեսականորեն և գործնականորեն պետք է տիրապետի ոչ միայն կրտսեր և ավագ, այլ նաև բարձրագույն սպայական կազմը: Այս խնդրի լուծման քայլերից մեկը տեղեկատվական դասընթացների ծրագրերի մշակումն ու դրանց իրականացումն է:

Այսպիսով, Զինված ուժերում օրեցօր մեծանում են տեղեկատվական գործողությունների դերն ու նշանակությունը, զարգանում են դրանց տեսական հիմքերը, ավելանում են տեղեկատվական գործողությունների ստորաբաժանումները: Առաջնահերթ են դառնում այդ ոլորտի նյութատեխնիկական բազայի

համալրման և որակյալ մասնագետների պատրաստման հիմնահարցերը:

## *Հետևություններ*

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները կարևոր նշանակություն ունեն 21–րդ դարասկզբի մարտական գործողությունների վարման համար: Ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակներում հավանական կամ գործող հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակայության հասնելու ձգտումը դարձել է զարգացած պետությունների հիմնական խնդիրներից մեկը:

Հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակայություն ապահովելու հիմնական գործիքը տեղեկատվական գործողությունն է՝ ուղղված հավանական կամ գործող հակառակորդի որոշումների ընդունման պրոցեսի խափանմանը, աղավաղմանը կամ վերահսկմանը, ինչպես նաև նմանատիպ գործողություններից սեփական զորքերի պաշտպանմանը: Նկատի ունենալով տեղեկատվական գործողությունների կարևորությունն արդի պայմաններում՝ առաջնահերթ են դառնում ոլորտի նյութատեխնիկական բազայի համալրման և մասնագետների պատրաստման խնդիրները:

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ «ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ[1]

Այսօր ռազմի դաշտում մղվող պատերազմին համընթաց իրականացվում է նաև տեղեկատվական պատերազմ, որի նպատակը հաղթանակն է տեղեկատվական ոլորտում: Այդ տիրույթում առկա առաջընթացը մեծապես ազդում է վերջնական հաղթանակի ձեռքբերման վրա: *Ներկայումս ամենուր ընդունված է այն գաղափարը, որ միայն պատերազմի դաշտում տարած հաղթանակը բավարար չէ և պետք է հաղթանակ տանել նաև տեղեկատվական դաշտում:* Ուստի, անհրաժեշտ է մշտապես վերլուծել այդ ոլորտում առկա բացթողումները, վերանայել, վերամշակել և փոփոխել տեղեկատվության մատուցման ձևերը, մեթոդներն ու սկզբունքները:

Տեղեկատվական պատերազմի հիմքում ընկած են տեղեկատվական ներազդման գործունեությունն ու տեղեկատվական գործողությունները (օպերացիաները):

Տեղեկատվական գործողություններն ուղղված են համապատասխան մասնագետների կողմից գործողությունների, արտահայտչամիջոցների, ազդանշանների և ուղերձների (մեսիջների) օգնությամբ թիրախային լսարանի տեղեկացմանը, ներ-

[1] «21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, # 3 (67), 2016:

ազդմանն ու համոզմանը: Ներազդում են ոչ միայն խոսքի, այլ նաև սիմվոլների և գույների միջոցով[1]:

Տեղեկատվական ներազդման գործունեությունը վերնագրերի, ուղերձների, գործողությունների սինքրոնացման միջոցով որոշակի տեղեկատվական հնարավորությունների ինտեգրումն է՝ հասարակությունների տեղեկացման, թիրախային լսարանների վրա ազդեցության, ինչպես նաև հակառակորդի և թշնամու որոշումների ընդունման վրա ներգործման նպատակով:

Տեղեկատվական գործողություններն, ի տարբերություն պարզունակ տեղեկատվական ներազդման գործունեության, ունեն կառուցման բարդ սխեմա, որի մշակումը պահանջում է բազմակողմ և խոր մասնագիտական գիտելիքներ և մոտեցումներ: Մինչդեռ տեղեկատվական ներազդման գործունեության իրականացմանը մասնակցում են նաև տեղեկատվական ոլորտում մասնագիտական գիտելիքներ չունեցող անձինք, օրինակ՝ բլոգերները, սոցիալական խմբերը և այլն:

Ներկայումս իրականանում է տեղեկատվական գործողություններից բիհևիորիստական[2] գործողությունների: Բիհևիորիզմի նկատմամբ այս ուշադրությունը համընկավ պատերազմի այսպես կոչված հումանիտարացմանը՝ ուշադրություն դարձնելով կլանող (գրավող) տեղեկատվության կազմակերպման ձևերին և մեթոդներին:

[1] Օրինակ՝ «Ալ-Քաիդան» իր առցանց քարոզչությունում ակտիվ օգտագործում է Ղուրանը տարբեր երանգներով: Սև գույնն ասոցացվում է ջիհադի հետ և այլն:

[2] Բիհևիորիզմ՝ հոգեբանական ուղղություն է մարդու և կենդանիների մոտ, բառացիորեն՝ գիտություն վարքի վերաբերյալ:

Տեղեկատվական պատերազմն այլ կերպ անվանում են նաև «փափուկ ուժ» [1]: «Փափուկ ուժը», ինչպես պնդում են ոլորտի մասնագետները, կարող է ոչ միայն գայթակղել, այլ նաև պարտադրել: Գայթակղությունն իր հերթին կարող է հիմնավորվել ինչպես բանական, այնպես էլ հուզական, մշակութային և քաղաքական բաղադրիչներով: Այդպիսի անհատական և խմբային ցանկությունների և հույզերի մեջ կարող են ընդգրկվել ժողովրդավարության և ազատության արժեքները:

Նշմարվում է շատ կարևոր տարբերություն «փափուկ» և «կոշտ» ուժերի միջև. *եթե «կոշտ ուժը» պատկանում է պետությանը, ապա «փափուկ ուժը» պետության մենաշնորհը չէ: «Փափուկ ուժի» ռեսուրսները պատկանում են զարգացած հասարակությանը:* Հետևաբար, որքան ուժեղ լինի հասարակության դինամիկան, այդքան ավելի հավանական է, որ նոր մշակութային արտադրանքները կարող են ձևափոխվել մյուսների համար հետաքրքիր «փափուկ ուժի»:

Ժամանակակից մարդն այսօր գտնվում է բարդ իրավիճակում. տեղեկատվական համատեքստերը փոփոխվում են այնպիսի արագությամբ, որ անձը դրանք երբեմն նույնիսկ չի հասցնում ընկալել և վերամշակել: Համացանցն այսօր կորցրել է իր կողմից հրամցվող տեղեկատվության գրավչությունն ու կարևորությունը, քանի որ այն ստեղծում է նույնատիպ «պրոդուկտ» նույնատիպ ընկալմամբ մարդկանց համար: Միևնույն ժամանակ, նույն խնդրի վերաբերյալ տեղեկատվությունն այնքան շատ է, որ նույնիսկ նշված թեմայով որակյալ «պրոդուկտը», ներմուծվելով համացանց, ընկալման ժամանակի սղության

պատճառով համարժեք չի ընկալվում ընթերցողի կողմից, նույնացվում է նախորդ նույնատիպ նյութերի հետ՝ թողնելով նույնանման ազդեցություն: Օրինակ՝ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի ԶՈւ-ի կողմից ԻՊ վարձկանների մասնակցության վերաբերյալ «Նորավանք» հիմնադրամի՝ իրենց կայքում տպագրված վերլուծական նյութը գրեթե նույնացվեց սոցցանցերում տեղադրված ոչ մասնագիտական և ավելի հակիրճ ներկայացված տեղեկույթի հետ: Այս և շատ այլ օրինակներ ցույց տվեցին, որ սոցցանցերի տեղեկատվությունն ավելի օպերատիվ և ազդեցիկ է, քան ԶԼՄ պաշտոնական տեղեկատվությունը: Հարկավոր է շեշտել, որ հաճախ պաշտոնական կայքերի տեղեկատվությունը ոչ արդյունավետ կազմակերպման հետևանքով ժամանակավրեպ է լինում: Հետևաբար, տեղեկատվության մատուցման ձևերի, մեթոդների և սկզբունքների վերափոխման խնդիրն առաջնահերթ է դառնում տեղեկատվական ոլորտի մասնագետների համար:

Տեղեկատվության մատուցման արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է փոփոխել վերջինիս մշակման տեխնիկական կարգը: Օրինակ, քառօրյա պատերազմի ժամանակ ՏՏ ոլորտի փորձագետ Ս.Մարտիրոսյանի կողմից մշակվեց հայկական և ադրբեջանական կայքերի տարանջատման ծրագիր, որը հուշում էր՝ որոնք են «կասկածելի» կայքերը, որոնց հրամցրած տեղեկատվությանը պետք չէ անվերապահ հավատալ:

Ներազդման լսարանների ծավալման հետևանքով աճում է նաև հետաքրքրությունը սոցցանցերի նկատմամբ, քանի որ

խմբային դրսևորումներն ու հակազդումներն ավելի կանխատեսելի են, քան անհատինը [2]: Խմբային գործընթացներն ավելի արագ են տարածվում, հետևապես խմբի վրա ներազդելն առավել արդյունավետ է, քան առանձին անհատի: Սոցիալական ցանցերի նկատմամբ հատուկ հետաքրքրություն են ցուցաբերում հատկապես համակարգչային կողմնորոշում ունեցող մասնագետները, ովքեր ձգտում են առավել մեծ լսարաններ հավաքագրել: Իսկ այս պարագայում առաջնահերթ է դառնում ընթերցողի ուշադրության ներգրավման խնդիրը: Նախկինում, երբ տեղեկատվությունը սահմանափակ էր, ուշադրության գրավման խնդիրն այդքան էլ արդի չէր: Իսկ այսօր, տեղեկատվական ծավալուն հոսքերի առկայության պայմաններում, «ուշադրության գրավումը» կանխորոշիչ է դարձել: Ուստի, հարկ է կրթել նոր մասնագետներ, ովքեր կմշակեն «ուշադրության գրավման մոդելներ»՝ խմբի վրա արդյունավետ ներազդում ապահովելու համար:

### *Տեղեկատվական գործողությունների կառուցման հայտնի երեք մոդելները*

Գրականության մեջ տարբերակվում է տեղեկատվական գործողությունների կառուցման երեք հիմնական մոդել: Լայնորեն տարածված է տեղեկատվական գործողությունների իրականացման ամերիկյան ձևը, այն ակտիվ կիրառվում է համաշխարհային պրակտիկայում և պատերազմների ժամանակ: Բրիտանական ձևն ավելի քիչ է տարածված, քանի որ այնչափ տեսական և գործնական կիրառում չի ունեցել, որքան ամերիկյան ձևը: Այս երկու մոդելները միմյանցից տարբերվում են բազային

հաշվարկային կետի ընտրությամբ: Ամերիկյան մոդելի առաջացման հիմքում գովազդների և *փիառի* կառուցման մոդելն է, որի դեպքում կարևորվում է օբյեկտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը: Օրինակ, իրականացնելով գրագետ տեղեկատվական գործողություն՝ ամերիկյան մասնագետները տարածել են այն միտքը, որ Սադամ Հուսեյնը բռնակալ է, ճնշում է իր ժողովրդին, վտանգի աղբյուր է տարածաշրջանի պետությունների համար, ներազդել են Սադամ Հուսեյնի հանդեպ համաշխարհային հանրության վերաբերմունքի վրա և պատերազմի միջոցով չեզոքացրել Իրաքի ղեկավարին: Նմանատիպ գործողություն իրականացվել է նաև Քադաֆիի նկատմամբ:

Իսկ բրիտանական մոդելը շեշտադրում է ոչ թե վերաբերմունքի, այլ վարքի փոփոխությունը, քանի որ ոչ միշտ է վերաբերմունքի փոփոխությունը բերում վարքի ցանկալի փոփոխության: Նույնիսկ օբյեկտի նկատմամբ դրական վերաբերմունքի պարագայում կան դեպքեր, երբ, այնուամենայնիվ, իրականացվում են բացասական գործողություններ[1]:

Տեղեկատվական գործողությունների կառուցման երրորդ՝ ռուսական մոդելը ստացել է ռեֆլեքսիվ անվանումը: Այս մոդելը շեշտադրում է իր պետության, զինված ուժերի, զինտեխնիկայի հզորությունը՝ փորձելով վախի մթնոլորտ սերմանել հակառակորդի շրջանում: Բավական է հիշել հայտնի ռուսական ասույթը. «Ռուսաստանի դաշնակիցներն են իր բանակն ու նավատորմը»: Եթե ամերիկյան և բրիտանական ձևերի վերաբերյալ

[1] Օրինակ, աֆղան երիտասարդները փող վաստակելու նպատակով տեղադրում են ականներ անգլիական զինվորականների դեմ, որպեսզի այդ վաստակած գումարներով մեկնեն հենց Անգլիա՝ սովորելու:

կարելի է հաստատապես ասել, որ դրանք միայն տեսություն չեն և կիրառվում են գործնականում, ապա ռուսական ձևի մասին այդպիսի պնդում անել չենք կարող: Ռուսական մոդելի կիրառման օրինակ կարելի է համարել մի դեպքում ռուս-վրացական, մյուս դեպքում՝ ռուս-ուկրաինական հակամարտությունը: Ռեֆլեքսիվ ղեկավարում կիրառվել է Ղրիմի հիմնահարցի դեպքում. մասնավորապես՝ ներազդեցության օբյեկտ են եղել երեք թիրախային լսարաններ՝ Ղրիմի ղեկավարությունը, ուկրաինական իշխանությունը, միջազգային կառույցները, հատկապես ԵՄ-ը և ՆԱՏՕ-ն: Կանխատեսվել էին դրանց հավանական դրսևորումները, պահվածքի փոփոխությունը: Ռուսաստանյան մասնագետների նպատակակետը հակառակորդի ապակազմակերպումն է, որն իր հերթին բերում է տեղեկատվական առավելություն:

Ռեֆլեքսիվ ղեկավարմամբ ընթացող պատերազմներում ամենից շատ «ռեֆլեքսիվ» որակական հատկանիշներ ունեցող կողմն ունենում է հաղթելու ավելի լայն հնարավորություն: «Ռեֆլեքսիայի» որակը կախված է տարբեր գործոններից. առավել կարևորներն են՝ հակառակորդի վերաբերյալ ունեցած, բազմակողմանի գիտելիքներն ու փորձն այդ ոլորտներում (օրինակ՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ մեր հրամանատարները կիրառեցին գիտելիքները և փորձը հակառակորդի հոգեբանական որակների, հնարավոր գործողությունների, հակազդումների վերաբերյալ):

Որոշումների ընդունման կենտրոնական կետը (թիրախակետը) կարևոր բաղադրիչ է բոլոր այդ երեք մոտեցումներում:

Հարցը միայն թիրախային լսարանի [3] որակային գիտելիքների, նրա հակազդեցության մակարդակի աստիճանի և այլ տեսակետի որոշման ընդունման հնարավորությունների մեջ է: Այս ամենը հանգեցնում է այն բանին, որ առաջնայնանում են հենց լսարանների հետազոտությունները:

Անհրաժեշտ է սահմանազատել ներազդման գործողությունները հոգեբանական գործողություններից, որոնք հաճախ լրացնում են միմյանց: Հոգեբանական գործողությունը ներազդման գործողության մի մասն է:

Հակառակորդի նկատմամբ ռեֆլեկտիվային վերահսկողությունն այն է, որ հակառակորդն ընդունի կոմունիկատորի տեսանկյունից ճիշտ որոշում, որն անհրաժեշտ է ոչ թե հակառակորդին, այլ կոմունիկատորին:

## *Եզրակացություն*

Ամփոփելով ապրիլյան մարտական գործողությունների օրերին տեղեկատվական դաշտի վերլուծությունը՝ տեսնում ենք, որ մեր տեղեկատվական ոլորտի մասնագետների գրագետ գործողությունների և իրականացված տեղեկատվական գործողության (տեղեկատվական ակցիաների շարքի) շնորհիվ առաջին օրերին հակառակորդի լրատվական դաշտը շոկային վիճակում էր՝ լրատվամիջոցները հիմնականում լռում էին, դրանց տրամադրած ինֆորմացիան համակարգված չէր և ընդամենը մեր ներկայացրածի արձագանքն էր: Հակառակորդի քարոզչամեքենան կտրված էր սահմանում տիրող իրավիճակից և այդ բացը լրացնելու նպատակով, նախապլանավորած «սցենարին» համաձայն, ապատեղեկատվություն էր տարածում իրենց բանակի

հաջողությունների վերաբերյալ՝ չհասկանալով, որ «կայծակնային պատերազմի» (բլից-կրիգի) իր պլանները ձախողվել են: Հայկական կողմը հենց սկզբից գրագետ ձևով իրականացրեց տեղեկատվական հակապայքարի (գործողությունների) հիմնական սկզբունքները՝ ապահովելով ակտիվություն, նպատակաուղղվածություն, տարատեսակություն և նախականխում: Հատուկ շեշտենք, որ խստորեն պահպանվեց գործողությունների գաղտնիությունը:

Իրականացվեց արդյունավետ համագործակցություն ԶԼՄ-ի, տեղեկատվական ոլորտի անհատ մասնագետների, «Նորավանք» հիմնադրամի, «Լեգեոն» տեղեկատվական խմբի, ինչպես նաև բազմաթիվ համացանցային կայքերի հետ:

Մյուս կողմից՝ ի հայտ եկան նաև բացեր, որոնց ճիշտ ընկալումն ու համապատասխան դասերը հնարավորություն կընձեռեն հետագայում սպասվելիք տեղեկատվական գործողությունների ժամանակ ջանքերը նպատակաուղղել ոչ թե ընթացիկ հարցերի կարգավորմանը, այլ ավելի երկարաժամկետ՝ ռազմավարական բնույթի խնդիրների լուծմանը: Այս խնդիրը պահանջում է ինչպես տեղեկատվական բնագավառում ներգրավված անձանց գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործում ու տեխնիկական հնարավորությունների ընդլայնում, այնպես էլ ավելի համակարգված ու նպատակամետ քաղաքականության մշակում:

## *Հետևություններ*

Ապրիլյան «քառօրյա պատերազմի» օրերին տեղեկատվական դաշտի վերլուծությունը ցույց տվեց, որ հայկական կողմի տեղեկատվական ոլորտի մասնագետների գրագետ գործողությունների և իրականացված տեղեկատվական գործողության շնորհիվ առաջին օրերին հակառակորդի լրատվական դաշտը շոկային վիճակում էր. լրատվամիջոցները հիմնականում լռում էին, դրանց տրամադրած տեղեկություններն ընդամենը հայկական կողմի արձագանքն էին: Հակառակորդի քարոզչամեքենան կտրված էր սահմանում տիրող իրավիճակից և ապատեղեկատվություն էր տարածում իր բանակի հաջողությունների վերաբերյալ: Հայկական կողմն իրականացրեց տեղեկատվական հակապայքար՝ ապահովելով ակտիվություն, նպատակաուղղվածություն, տարատեսակություն և նախականխում: Խստորեն պահպանվեց գործողությունների գաղտնիությունը:

Աղբյուրներ և գրականություն

1. *Ю.Давидов,* Понятие «жесткой» «мягкой» силы в теории международных отношений, Журнал теории международных отношений и мировой политики, «Международные процессы», http://www.intertrends.ru/four/006.htm
2. *Pentland A.,* Social physics, New York, 2014.
3. *Ա.Ղալեյան,* Տեղեկատվական գործողությունների նշանակության և արդյունավետության գնահատման մեխանիզմների կարևորությունը արդի զինված ուժերում, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #1, 2016, էջ 96:

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Բազմաթիվ աղբյուրներում (բաց, թե փակ) հանդիպում ենք տեղեկատվական գործողություններ իրականացնող կառույցներին նվիրված ոչ շատ, հաճախ իրարամերժ և կոնկրետ տեղեկատվություն չտրամադրող նյութեր և հոդվածներ: Այս ոլորտին նվիրված ամբողջական տեսական աշխատությունները սակավաթիվ են, ինչը հասկանալի է, քանի որ ոլորտը պարունակում է ռազմական և այլ բնույթի գաղտնիքներ:

ՀՀ ԶՈՒ տեղեկատվական գործողությունների զարգացման և հնարավորությունների հեռանկարների տեսլականի պատկերացման համար այսպիսի աշխատանքներն ուղղակի անհրաժեշտություն են:

Հոդվածն ուղղված է մասնակիորեն լրացնելու այդ բացը, մասնավորապես՝ համապատասխան տեղեկատվություն տրամադրելով ՀՀ ԶՈՒ սպայակազմին և ոլորտի պատասխանատուներին:

*Չինաստանի ժողովրդա-ազատագրական բանակում (ՉԺԱԲ)* տեղեկատվական գործողությունների վարման և զորքերի տեղեկատվահոգեբանական պաշտպանության ապահովման

[1] «21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, # 5 (69), 2016:

համար պատասխանատու է ՉԺԱԲ քաղաքականության գլխավոր վարչությունը: Սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը՝ պայմանավորված տեղեկատվական և տեղեկատվահաղորդակցային ենթակառուցվածքների գործունեության խաթարման գործառույթով, ՉԺՀ պետական մակարդակով դիտարկվում է որպես բացառապես տեղեկատվական պատերազմների բաղկացուցիչ մաս: Այդ տեխնոլոգիաների կիրառման գլխավոր նպատակը *«ղեկավարման համակարգերի դեմ պայքարն է»*, որը բովանդակում է հակառակորդի զորքերի և սպառազինության ղեկավարման համակարգերի համակարգված ներազդեցության միջոցառումների մի ամբողջ համախումբ՝ տարաբնույթ ծրագրային մեթոդներով, ռադիոէլեկտրոնային պայքարի իրականացմամբ և կրակային խոցման միջոցներով: Համացանցում տեղեկատվական հակապայքարի կազմակերպման գործողությունների համակարգումն իրականացնում է ՉԺԱԲ գլխավոր շտաբի ռադիոէլեկտրոնային պայքարի վարչությունը: Այդ կառույցին են ենթարկվում հակառակորդի տեղեկատվական համակարգերին միանալու հնարավորություններն ու սեփական ղեկավարման ցանցերի պաշտպանությունն ուսումնասիրող մասնագիտացված կենտրոնները, որոնք իրականացնում են նաև տեղեկատվական պատերազմների վարման հնարավորությունների վերլուծություն՝ կիրառելով ՉԺԱԲ կենտրոնական և կայազորային ենթակա զորամասերի կողմից իրականացվող տեղեկատվահոգեբանական գործողությունները, ռադիոէլեկտրոնային պայքարի և կապի զորամասերի տեխնիկական հնարավորությունները: Ներկայում ՉԺԱԲ-ում փոփոխվում է տեղեկատվա-

կան հակապայքար իրականացնող ստորաբաժանումների կազմհաստիքային կառուցվածքը: Չին մասնագետների կարծիքով՝ նրանք պետք է ավելացնեն *համակարգչային հետախուզական և հակահետախուզական, էլեկտրոնային վիրուսային հարձակումների, հակավիրուսային պաշտպանության և այլ տեխնիկական խոցման միջոցներից պաշտպանության ստորաբաժանումներ:* ՉԺԱԲ գլխավոր շտաբի կապի վարչությունում գործում է տեղեկատվական պատերազմի վարման ուսումնական (փորձարարական) կենտրոն: Նրա կազմի մեջ է մտնում Հոնկուի ուսումնական կենտրոնը, որը տեղեկատվական հակապայքարի իրականացման հիմնական ձևերի և մեթոդների մշակման հիմնական ուսումնական մարզադաշտն է: Այդ նպատակով ուսումնական կենտրոնում հիմնվել է տեղեկատվական պատերազմի վարման լաբորատորիա, որտեղ իրականացվում են հետազոտություններ հետախուզության վարման, ՌԷՊ-ի, համակարգչայի ցանցերում հակապայքարի կազմակերպման, հոգեբանական պատերազմների իրականացման ոլորտներում: Լաբորատորիան հետազոտում է նաև տեղեկատվության անվտանգության հարցերը, մասնավորապես՝ հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցները:

Տեղեկատվական հակապայքարին վերաբերող չինաստանյան հայացքները մեծ մասամբ ձևակերպվում են ամերիկյան տեղեկատվական գործողությունների հայեցակարգերի ներազդեցությամբ (մեկնաբանմամբ): Չին ռազմական մասնագետները կարծում են, որ ապագայի պատերազմներում մարտական գործողությունների հաջողություններն անմիջականո-

րեն կախված կլինեն մարտադաշտում տեղեկատվական առավելությունից, որն իր հերթին նշանակում է ստանալ, վերլուծել և կիրառել տեղեկատվությունը հակառակորդի վրա ներազդելու նպատակով: Ի տարբերություն ԱՄՆ-ի, որը ձգտում է համաշխարհային գլոբալ տիրապետության, չինական հայեցակարգը կրում է պաշտպանողական բնույթ, և նրա գլխավոր նպատակը ԱՄՆ-ի կողմից հնարավոր ռազմական վտանգներին հակազդումն է:

Կախված մասշտաբներից և լուծվող խնդիրների բնույթից, ներգրավվող ուժերից և միջոցներից՝ Չինաստանում տարբերակվում է տեղեկատվական հակապայքարի երկու ձև.

- *Լայն իմաստով* տեղեկատվական հակապայքարը կազմակերպվում է պետական բոլոր մակարդակներով: Այն լինում է գաղտնի կամ բաց, իրականացվում է ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակաշրջաններում: Տեղեկատվական հակապայքարի այս ձևը հսկողություն է հաստատում ՉԺՀ ազգային անվտանգությանը վտանգներ ներկայացնող պետությունների տեղեկատվական տարածքի վրա, ինչպես նաև ապահովում է սեփական տեղեկատվական անվտանգությունը:
- *Նեղ իմաստով* տեղեկատվական հակապայքարն իրականացվում է հենց պատերազմի և ռազմական ընդհարումների ժամանակ, սահմանափակ ռազմաթատերաբեմում: Այս տեսակը ստացել է «Ռազմական ոլորտի տեղեկատվական հակապայքար» անվանումը: Նրա հիմնական իմաստը հակառակորդի զորքին և սպառազինության ղեկավարման

համակարգերին զգալի կորուստ հասցնելն է կամ գերճշգրիտ զինատեսակների և բոլոր տեսակի հետախուզության իրականացման համակարգերի կիրառման դժվարացումը:

*Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունում (ՄԹ)* տեղեկատվական հակապայքար հասկացությունը մեկնաբանվում է որպես ապատեղեկատվություն, հակառակորդի պետական ու ռազմական ղեկավարման համակարգերի վրա տեղեկատվատեխնիկական և տեղեկատվահոգեբանական ներազդեցության միջոցառումների իրականացում (մասնավորապես՝ այն անձանց նկատմամբ, ովքեր ղեկավարման ոլորտներում ընդունում են առավել կարևոր որոշումներ), ինչպես նաև սեփական տեղեկատվական անվտանգության ապահովում: Բրիտանական մինիստրների պալատում տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերի համար պատասխանատու է *համատեղ կառավարման գործադիր խումբը:* Խաղաղ պայմաններում խմբի ղեկավարումն իրականացնում է արտաքին գործերի նախարարը: Իրավիճակի սրման դեպքում ղեկավարումն անցնում է պաշտպանության նախարարի իրավասության տակ, որին ենթակա է նաև *ռազմական տեղեկատվական գործողությունների կոորդինացիոն խումբը:* Այս խումբն ապահովում է տեղեկատվական գործողությունների վարման համար պատասխանատու բոլոր շտաբների և ղեկավարման մարմինների միջև համագործակցությունն ու գործողությունների համակարգումը, որտեղ կարևոր դեր ունի տեղեկատվական գործողությունների հետախուզական ապահովումն իրականացնող ռազմական հե-

տախուզության շտաբը, որը միջոցառումներ է իրականացնում նաև տեղեկատվական գործողությունների աջակցության խմբի հետ: Խումբն իր գործունեությունն իրականացնում է սոցիալական հետազոտությունների և ենթակառուցվածքների գնահատման բաժնի տրամադրած վերլուծությունների հիման վրա:

Տեղեկատվական գործողությունների ապահովմանը վերաբերող վերջնական փաստաթղթերն ուղարկվում են պաշտպանության նախարարություն և ՄԹ զինված ուժերի միացյալ օպերատիվ շտաբ, որտեղ ոլորտի մասնագետները կանխորոշում են տեղեկատվական գործողությունների նպատակներն ու խնդիրները, մշակում ներգրավված ղեկավարման մարմիններին ուղղված կարգադրություններ: Այդ գործունեության մեջ կարևոր դերակատարություն ունի միացյալ օպերատիվ շտաբը (ՄՕՇ), իսկ մարտական գործողությունների թատերաբեմում՝ միացյալ զորքերի (ուժերի) խմբավորման շտաբը: ՄՕՇ-ն իրականացնում է *տեղեկատվական գործողությունների ռազմավարական պլանավորումն ու իրականացումը:* Մարտական գործողությունների թատերաբեմում միացյալ զորքերի խմբավորման (ուժերի) շտաբը (ՄԶԽՈՒՇ) պատասխանատու է պետության սահմաններից դուրս իրականացվող տեղեկատվական գործողությունների անցկացման և ղեկավարման համար: ՄԶԽՈՒՇ-ում առկա են *տեղեկատվական գործողությունների իրականացման խմբեր*, որոնք ուղղակի ենթարկվում են շտաբի հետախուզական վարչությանը:

Ռազմական ստորաբաժանումներում տեղեկատվական հակապայքարի գործողություններն ուրվագծվում են «Կռիվ ղե-

կավարման համակարգերի դեմ» հայեցակարգի շրջանակներում: Վերջինիս հիմնական խնդիրներն են.

- հակազդել հակառակորդի հետախուզությանը և ապահովել սեփական զորքերի գործողությունների անվտանգությունը,
- մոլորության մեջ գցել հակառակորդին,
- վարել ռադիոէլեկտրոնային պայքար,
- իրականացնել հոգեբանական գործողություններ,
- ֆիզիկապես ոչնչացնել հակառակորդին:

Տեղեկատվական գործողությունները լինում են հարձակողական և պաշտպանողական: Հարձակողական տեղեկատվական գործողությունները գլխավորապես անց են կացվում հետևյալ նպատակներին հասնելու համար. հակառակորդի ղեկավարության կողմից իրավիճակի ոչ ադեկվատ գնահատում և նրանց կամքի ու ճիշտ որոշումներ ընդունելու հնարավորությունների խափանում: Հակառակորդը պետք է գործի և մտածի այնպես, ինչպես ձեռնտու է բրիտանական կողմին:

*Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունում* (ՌԴ ՊՆ) կազմավորվել է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների, նորարարության, հետազոտությունների և ռոբոտատեխնիկայի համար պատասխանատու ռազմական ղեկավարման մարմին: Համաձայն ՌԴ ՊՆ պլանների՝ այդ վարչության գործունեության ընթացքում մշակվում են սպառազինության և ռազմական հատուկ տեխնիկայի հեռանկարային նմուշներ, կազմակերպվում են հայրենական և համաշխարհային առաջատար հետազոտությունների մշա-

կումներ և վերլուծություններ, տեխնոլոգիաների հավաք: Բացի այդ, վարչությունը պլանավորում է ստեղծել ռազմական, հատուկ, երկակի նշանակության տեխնոլոգիաների միասնական տեղեկատվական ռեսուրս:

*Ռուսաստանի Դաշնության գլխավոր շտաբի գլխավոր օպերատիվ վարչության* կազմում գործում է *տեղեկատվական հակապայքարի վարչությունը:* Այս վարչության գործունեության նպատակը համազորային գործողությունների ժամանակ տեղեկատվական հարվածների և հարձակումների, հոգեբանական և տեղեկատվատեխնիկական գործողությունների, քողարկման միջոցառումների, բարոյահոգեբանական ապահովման, ՌԷՊ-ի, կապի անվտանգության և տեղեկատվության պաշտպանության, զորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողությունների համակցված պլանավորված կիրառումն է: ՌԴ ԶՈՒ տեղեկատվական հակապայքարը հակառակորդի մարդկային և նյութական ռեսուրսների վրա ներգործող միջոցառումների համալիր է՝ ուղղված հակառակորդի կողմից ճիշտ որոշումներ կայացնելու դժվարացմանը, ինչպես նաև սեփական տեղեկատվական համակարգերի պաշտպանությանը:

*Իսրայելի պետության ղեկավարությունն* արաբական աշխարհի դեմ հակամարտության պայմաններում տեղեկատվական հակապայքարի կազմակերպմանը հատկացնում է անհամեմատ մեծ ուշադրություն: Իսրայելում այլ երկրների տեղեկատվական օբյեկտների և հեռահաղորդակցման ենթակառուցվածքների գործունեության խափանման միջոցառումների համար պատասխանատու են ազգային զինված ուժերի գլխավոր շտաբի

հետախուզության, կապի և համակարգչային համակարգերի վարչությունները: Իսլամական պետությունների ազգայնականների կողմից համացանցում հաճախակի դարձած կիբեռհարձակումներն Իսրայելին ստիպեցին 2010թ. որոշում ընդունել ստեղծելու այնպիսի ստորաբաժանում, որը կմասնագիտանա կիբեռահաբեկչության դեմ հակապայքարում՝ ինչպես հավանական հակառակորդի դեմ գլոբալ տեղեկատվական ցանցերում, այնպես էլ կառավարական, ուժային կառույցների, ֆինանսական և այլ տեղեկատվական ցանցերում: Դրանց կառավարումն իրականացնում է *գլխավոր շտաբի հետախուզության վարչության ռադիոէլեկտրոնային հետախուզության հատուկ ստորաբաժանումը:* Իսրայելի ԶՈՒ հրամանատարությունը հարակից պետությունների տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգերի գործունեության խափանման նպատակով կիրառում է իսրայելական ռազմաօդային ուժերի մարտական ինքնաթիռներն ու անօդաչու թռչող սարքերը՝ համալրված իսրայելական և ամերիկյան արտադրության ռադիոէլեկտրոնային ճնշման ժամանակակից կայաններով: Իսրայելի պաշտպանության նախարարության պատվերով շարունակվում են «Սյուտեր» ՌԷՊ տեխնիկական-ծրագրային համակարգային հեռանկարային միջոցի ստեղծման աշխատանքները, որը նախատեսված է հակառակորդի ռադիոէլեկտրոնային հսկողության հաղթահարման, հակառակորդի ՀՕՊ համակարգերի ռադիոկապերով հաղորդվող տեղեկատվության հափշտակման և դրանցում նշանակետերի կեղծ տվյալների և չափորոշիչների ներդրման համար:

Իսրայելի ԶՈՒ ԳՇ հետախուզական վարչությունն ակտիվ

համագործակցում է տեղական «Էլբիտ սիստեմս» կորպորացիայի մեջ մտնող գիտահետազոտական և արտադրական ընկերությունների հետ: Իսրայելում կարծում են, որ միջազգային իրավական մեխանիզմների բացակայությունը թույլ է տալիս առանց միջազգային կազմակերպությունների և արտասահմանյան պետությունների հետ համաձայնեցման խոցել ծրագրային-տեխնիկական միջոցների կիրառմանն ուղղված համակարգչային ցանցերը:

Հնդկաստանի Հանրապետությունում տեղեկատվական անվտանգության ապահովման պատասխանատուներն են (կախված առաջադրված խնդիրներից) կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, ներքին գործերի և պաշտպանության նախարարությունները: Հնդկաստանի Հանրապետության զինված ուժերի միացյալ շտաբի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունում ստեղծվել է համակարգչային ցանցերի խոցելիության գնահատման ձեռնարկ, որը կիրառվում է ազգային ռազմածովային ուժերում (ԱՌԾՈՒ): Համաձայն այդ փաստաթղթի՝ միավորումներում և զորամասերում ներգրավված քաղաքացիական մասնագետները եռամյակը մեկ իրականացնում են ստուգումներ: Մասնավորապես, այդ ստուգման խնդիրներն են.

- վերլուծել հեռահար (գաղտնի, ոչ քայքայիչ) ԱՌԾՈՒ-ում ապահովվող համակարգչային ցանցերի տեխնիկական, ծրագրային վարչարարական առկա թերությունները,
- իրականացնել սահմանափակ տեղեկատվության պաշտպանող համակարգերի գաղտնաբառերի ջարդում, *DDOS, DOS* և այլ ձևերի կիբեռհարձակումներ,

- փնտրել և հայտնաբերել բրաուզերներում, փոստային ագենտներում, սերվերների և շլուզների ծրագրերում «թույլ սողանցքներ»:

Հնդկաստանի Հանրապետության զինված ուժերում զորատեսակների միջև տեղեկատվական գործունեության համակարգման, ինչպես նաև այլ ուժային կառույցների հետ համագործակցելու նպատակով միացյալ պաշտպանության շտաբի կազմում ստեղծվել է *տեղեկատվական պատերազմի գործակալություն:* Այդ կառույցի հիմնական գործառույթներն են.

- տեղեկատվական պատերազմի վարման հիմնական ձևերի ու մեթոդների ընտրությունը,
- զորքերի տեղեկատվական անվտանգության ապահովման վերահսկողությունը,
- Հնդկաստանի ԶՈՒ զորատեսակների տեղեկատվական պատերազմի մարմինների գործունեության համակարգումը և դրանց կողմից համատեղ գործողությունների կազմակերպումն ու անցկացումը,
- պետության տարածքում ներքին գործերի նախարարության հետ համատեղ տեղեկատվահոգեբանական գործողությունների իրականացումը:

Հնդկաստանի Հանրապետության մասնագետների կողմից մշակվող նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս եզրակացնել, որ դրանց հաջող կիրառման դեպքում կխաթարվեն հակառակորդ պետությունների տեղեկատվական օբյեկտները և հեռահաղորդակցման ուղիները:

*Թուրքիայի Հանրապետությունում* ներկայում ԱՄՆ-ը մշակել է ծրագիր Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարությանը *կից Թուրքական տեղեկատվական զորքերի* պատրաստման նպատակով: Այն իր վրա է վերցրել Թուրքիայի «տեղեկատվական զորքերի» մասնակի ֆինանսավորումը, իսկ մասնագիտացումն ու հմտացումն այդ «ենիչերիներն» անցնելու են Մերձբալթիկայում և Ուկրաինայում, քանի որ այնտեղ ամերիկացիներին հաջողվել է ստեղծել «ստացված տեղեկատվական նախագծեր՝ ուղղված Ռուսաստանի ագրեսիայի հետմղմանը»: Թուրքիայի ազգային պաշտպանության նոր նախարարի համար Պենտագոնի հետ նրա փոխգործակցության նախագիծն այս պաշտոնում առաջինն է: Թուրքիայի Գլխավոր շտաբի պետը նախագիծն իր ապագա մասնակիցներին ներկայացնելիս ասել է, որ Անկարայի ուշադրությունն այս աշխատանքի հանդեպ չափազանց մեծ է, իսկ ծրագիրը փակ է հանրային լուսաբանման համար: Ստեղծված «տեղեկատվական զորքերը» հաշվետու են թուրքական Գլխավոր շտաբին և պաշտոնապես համարվում են Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության զինված ուժերին կից «քաղաքացիական անձնակազմ»: *Կանխատեսելի է, որ դրանից կօգտվի նաև Ադրբեջանը:*

*Ճապոնիայի պաշտպանության նախարարությունում ստեղծվել է* առաջին հատուկ մասնագիտական ստորաբաժանումը: Նրա նպատակը հաքերների դեմ պայքարն է, ովքեր գնալով հաճախակի են դարձնում հարձակումները պետության ռազմական ենթակառուցվածքների վրա: Ստորաբաժանումը Պենտագոնի մասնագետների հետ իրականացրել է փակ համա-

տեղ վարժանքներ: Նախկինում Ճապոնիայի զինված ուժերի համակարգչային ցանցի պաշտպանությունն իրականացրել են առանձին շտաբներ գործուղված մասնագետները: Նոր կազմավորված ստորաբաժանումը պետք է սերտորեն համակարգի նրանց գործունեությունը, ամրագրի և թույլ չտա բանակի և նավատորմի տեղեկատվական համակարգերի ներթափանցման կամ ճնշման բոլոր փորձերը: Այդ ստորաբաժանման մեջ մտնող համակարգչային ցանցերի ծրագրավորողները և փորձագետները հետագայում պետք է տարածեն իրենց վերահսկողությունն ամբողջ պետական համակարգչային ցանցի վրա: 2015թ. կառավարությանը կից ստեղծվել է կիբեռանվտանգության կենտրոն: Այն կոորդինացնում է այդ ոլորտի ամբողջ քաղաքականությունը, ներառյալ մասնագետների պատրաստումը:

*Հայաստանի Հանրապետության զինված ուժերի* ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում այս ոլորտի զարգացմանը, դրա տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանը, մասնավորապես՝ ՀՀ ԶՈՒ-ում մշակված ղեկավար փաստաթղթերով հստակեցված են տեղեկատվական հակամարտության նպատակները, խնդիրներն ու հիմնական սկզբունքները, ինչպես նաև պաշտոնատար անձանց պարտականությունները նման գործողությունների նախապատրաստման և իրականացման ժամանակ՝ թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամանակաշրջաններում: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմում արդեն մի քանի տարի գործում է *տեղեկատվական հակապայքարի ստորաբաժանումը,* որը ռազմական գործողությունների պլանավորման ալգորիթմում իր առանցքային

դերն ու նշանակությունն ունի: Կարճաժամկետ գործունեության ընթացքում տեղեկատվական հակապայքարի ստորաբաժանումը հաջողությամբ իրականացրել և իրականացնում է բազմաթիվ տեղեկատվական գործողություններ (ակցիաներ), միաժամանակ սեփական տեղեկատվական համակարգերը պաշտպանում է հակառակորդի համանման գործողություններից:

Ամփոփելով ժամանակակից բանակում տեղեկատվական գործողություններ իրականացնող կառույցների կառուցվածքներն ու խնդիրները՝ մեկ անգամ ևս նշենք, որ տեղեկատվական պատերազմները ծավալվում են նույն նպատակով ու սկզբունքներով, ինչ որ համազորային պատերազմները, միայն թե՝ տեղեկատվական դարաշրջանում: Տեղեկատվական պատերազմն, առհասարակ, պատերազմի բաղկացուցիչ մաս է, նպատակը այն ռեսուրսներն են, որոնք բաժին են հասնում հաղթողին և թույլ են տալիս առաջ բերել անհրաժեշտ տեսակետներ, գաղափարներ, տարածել և ներդնել դրանք հասարակության շրջանում: Հետևաբար, աշխարհի ժամանակակից բանակների պատասխանատուները գիտակցում են, որ ապագայի պատերազմներում տեղեկատվական «հնարավորություններին» տիրելն ու դրանք կիրառելը դառնում են այնպիսի անհրաժեշտ բաղկացուցիչ, ինչպիսին էր սպառազինությանը, ռազմամթերքին, ռազմական տեխնիկային և այլնին տիրելն անցյալի պատերազմներում:

Մենք ապրում ենք նոր՝ տեղեկատվական դարաշրջանում, որին բնորոշ է պետությունների զինված ուժերի տեղեկատվական պատերազմների վարումը միմյանց դեմ: Միևնույն ժամանակ, տեղեկատվական պատերազմները միշտ չէ, որ պետք է

իրականացվեն զինված ուժերի կողմից և ուղղվեն ռազմական օբյեկտների դեմ: Պետությունը, նրա կազմակերպություններն ու կառույցները, արտադրական և կոմերցիոն կառուցվածքները նույնպես պետք է մասնակցություն ունենան և ինքնուրույն իրականացնեն տեղեկատվական գործողություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ցանկացած հակամարտության ընթացքի և արդյունքի վրա: Հետևաբար, այս ոլորտն առաջիկա տասնամյակներում գերակա է համարվելու նաև պետությունների անվտանգային համակարգերի արդիականացման և զարգացման մեջ:

## *Հետևություններ*

Հոդվածի առանցքում աշխարհի տարբեր երկրների բանակների տեղեկատվական գործողությունների իրականացման տեսլականն է և այդ խնդիրների լուծման նպատակով ստեղծված ստորաբաժանումները: Ելնելով զինված ուժերի տեղեկատվական գործողությունների նպատակներից՝ ստեղծվում և գործադրվում են համապատասխան ստորաբաժանումներ, որոնք պետության ընդհանուր տեղեկատվական քաղաքականության ծիրում մշակում և կյանքի են կոչում զինված ուժերի բնույթից բխող տեղեկատվական գործողություններ: Հոդվածում ներկայացված են մի շարք պետությունների, այդ թվում և ՀՀ ԶՈՒ տեղեկատվական գործողությունների համար պատասխանատու ստորաբաժանումների կառուցվածքը և խնդիրները:

## Աղբյուրներ և գրականություն

1. Информационные войны в киберпространстве - Китай и Индия, https://interaffairs.ru/news/show/614
2. Минобороны РФ сформировало хай-тек-подразделения и нанимает кибер-бойцов, http://www.cnews.ru/news/top/minoborony_rf_sformirovalo_hajtekpodrazdeleniya
3. http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/958509
4. Информационно-психологическое противоборство в современной войне, http://armyrus.ru/index.php?option=com_content&task=view&id=739&Itemid=1148.
5. Аппарат психологической борьбы Вооруженных сил Румынии //« Зарубежное военное обозрение», М., № 9, 2007.
6. http://pentagonus.ru/
7. *Гриняев С.Н., Арзуманян Р.В., Акопян А.А., Хлюстов М.В.,* Информационная война в Сирии. Анализ, оценки, тенденции, М., АНО ЦСОиП, 2016.

# ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ***Տեղեկատվական օբյեկտներ*** – տեղեկատվություն, տեղեկատվա-հոգեբանական և տեղեկատվա-տեխնիկական օբյեկտներ,
- ***Տեղեկատվություն*** – տեղեկություններ անձանց, առարկաների, փաստերի, դեպքերի, երևույթների և պրոցեսների վերաբերյալ, անկախ դրանց ձևերից և ներկայացումից:
- ***Տեղեկատվա-հոգեբանական օբյեկտներ*** – պետական և ռազմական ղեկավարություն, զինված խմբավորումների ղեկավարություն, քաղաքական, հասարակական, կրոնական և այլ կազմակերպությունների ղեկավարներ և անդամներ:
- ***Տեղեկատվա-տեխնիկական օբյեկտներ*** – հետախուզություն, ավտոմատացված ղեկավարման համակարգեր, ՍՌՏ տեղեկատվայնացված նմուշներ, տեղեկատվության մշակման և վերլուծության կենտրոններ, հեռահաղորդակցության և տեղեկատվության փոխանակման կապուղիներ, ազգաբնակչության տեղեկատվության ԶԼՄ, ԷՀՄ-ներ, ծրագրա-էլեկտրոնային արտադրանքներ, պետական ենթակառուցվածքի ավտոմատացված ղեկավարման համակարգի տեխնոլոգիական պրոցեսների հիմնարար սեգմենտներ:
- ***Հարձակողական բաղկացուցիչներ*** – հակառակորդի տեղեկատվական օբյեկտների վրա տեղեկատվական և ֆիզիկական ներազդեցություն:

- ***Պաշտպանական բաղկացուցիչներ*** – սեփական զորքերի, ազգաբնակչության և տեղեկատվական ենթակառուցվածքի օբյեկտների պաշտպանությունը հակառակորդի (օտարերկրյա պետությունների) տեղեկատվական և ֆիզիկական ներազդեցությունից:
- ***Տեղեկատվական ներազդեցություն*** – ըստ նպատակների, խնդիրների, տեղի և ժամանակի համաձայնեցված միջոցառումների համախումբ է՝ հակառակորդի տեղեկատվության, տեղեկատվական օբյեկտների վրա տեղեկատվա-հոգեբանական և տեղեկատվա-տեխնիկական ներազդեցությամբ:
- ***Ներազդեցություն տեղեկատվության վրա*** – միջոցառումների համախումբ է՝ ուղղված տեղեկությունների ու լուրերի զավթմանը (պոկմանը), աղավաղմանը և ոչնչացմանը՝ դրանց հավաքման, մշակման, պահպանման և հակառակորդի տեղեկատվական կապուղիներով հաղորդման պրոցեսում, ինչպես նաև հանրությանը ներկայացվող զանգվածային լրատվության ընթացքում:
- ***Տեղեկատվա-հոգեբանական ներազդեցություն*** – օտարերկրյա պետությունների պետական և ռազմական ղեկավարության ներկայացուցիչների, զինծառայողների և ազգաբնակչության, պետական և հասարակական կազմակերպությունների անդամների, ԶԼՄ ներկայացուցիչների գիտակցության, կամքի և համոզմունքների վրա ներազդելու միջոցառումների համախումբ է՝ ՀՀ իրավիճակի մասին կարծիքի, ինչպես նաև ԶՈՒ առջև դրված խնդիրների լուծման բարենպաստ պայմանների ձևավորման համար:

- ***Տեղեկատվա-տեխնիկական ներազդեցություն*** – ծրագրա-էլեկտրոնային ներազդեցության համախումբ է՝ ուղղված հակառակորդի տեղեկատվա-տեխնիկական օբյեկտների գործունեության դադարեցմանը (դժվարեցմանը) կամ շարքից դուրսբերմանը որոշակի ժամանակահատվածում:
- ***Ֆիզիկական ներազդեցություն*** – կրակային, ինչպես նաև հատուկ նշանակության միջոցների համաձայնեցված կիրառումն է հակառակորդի հատուկ տեղեկատվական օբյեկտների ոչնչացման նպատակով, ինչպես հակառակորդի կրակային խոցման ժամանակ, այնպես էլ տեղեկատվական հակապայքարի պլանով:
- ***Պաշտպանություն տեղեկատվական ներազդեցությունից*** – միջոցառումների համախումբ է՝ուղղված անձնական տեղեկատվության պաշտպանմանը, հակառակորդի կողմից տեղեկատվա-հոգեբանական և տեղեկատվա-տեխնիկական ներազդեցության արդյունավետության նվազեցմանը կամ չեզոքացմանը:
- ***Տեղեկատվության պաշտպանում*** – գործունեություն է՝ ուղղված պահպանվող տեղեկատվության արտահոսքի կանխմանը, պահպանվող տեղեկատվության վրա չթույլատրված և չկանխամտածված ներազդմանը:
- ***Տեղեկատվական օպերացիա*** - տեղեկատվական հակապայքարի՝ ըստ նպատակների, խնդիրների, տեղի և տեղեկատվական գործողությունների ժամանակի, հարվածների և հարձակումների, հոգեբանական և տեղեկատվա-տեխնիկական օպերացիաների, քողարկման միջոցա-

ռումների, բարոյահոգեբանական ապահովման, ՌԷՊ, կապի անվտանգության և տեղեկատվության պաշտպանության, զորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողությունների, համակցված հնարքների համաձայնեցված կիրառումն է, որն անցկացվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ղեկավարության կողմից մեկ մտահղացմամբ և պլանով:

- ***Տեղեկատվական գործողություններ*** - ըստ նպատակների, խնդիրների, տեղի և ժամանակի տեղեկատվական ակցիաների, տեղեկատվական և ֆիզիկական ներազդման և միջոցառումների պաշտպանման, մի քանի հերթական ծագող խնդիրների լուծման համար համակցված, համաձայնեցված և կապակցված գործողություններ են: Տեղեկատվական գործողության ձևերն են տեղեկատվական հարվածը և տեղեկատվական հարձակումը:
- ***Տեղեկատվական հարված*** – միաժամանակյա կարճատև տեղեկատվա-հոգեբանական, տեղեկատվա-տեխնիկական ազդեցություն է հակառակորդի մի շարք տեղեկատվական օբյեկտների վրա:
- ***Տեղեկատվական հարձակում*** – միաժամանակյա տեղեկատվական և (կամ) ֆիզիկական ազդեցություն է հակառակորդի առանձին տեղեկատվական օբյեկտների վրա:
- ***Տեղեկատվական ակցիա*** – ծավալներով և ժամանակով սահմանափակված տեղեկատվական ներազդեցություն է հակառակորդի կոնկրետ տեղեկատվական օբյեկտի (օբյեկտների խմբի) վրա և պաշտպանություն հակառակորդի նմանատիպ ազդեցությունից:

- ***Տեղեկատվական հակապայքար*** - տեղեկատվական ոլորտում պայքարի ձև է՝ տեղեկատվական առավելության հասնելու կամ արտերկրների (հակառակորդի) նկատմամբ առաջնահերթության պահպանման համար, տեղեկատվական օբյեկտների վրա տեղեկատվական կամ ֆիզիկական ներազդեցությամբ և նրանց կողմից նմանատիպ ներազդեցությունից պաշտպանվելու ճանապարհով:
- ***Տեղեկատվական առավելություն*** - տեղեկատվական ոլորտում ավելի բարենպաստ իրավիճակի նվաճումը կամ պահպանումն է, ուժերի և միջոցների ակտիվ գործունեության, հակառակորդի կողմից ոչ արդյունավետ հակազդեցության պայմաններում, տեղեկատվական հակապայքարի և ԶՈՒ խնդիրների լուծման համար:

*Արմեն Ղալեչյան*

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

***Տեխնիկական խմբագիրներ՝***
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

---

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 5 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 200։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «ԹԱՄԿ» ՍՊԸ տպարանում։